

R2E2 հիմնադրամի Ամբողջականության Շրջանակ

R2E2 ամբողջականության շրջանակը բաղկացած է **«Արգելված գործելաոճի վերաբերյալ R2E2 քաղաքականությունից»** և **Կանխարգելման, Բացահայտման, Հետաքննության և Վերականգնման գործառնություններից**, որոնք մանրամասնորեն նկարագրված են Գործառնական Ուղեցույցի սույն գլխում:

1.1 Արգելված գործելաոճի վերաբերյալ քաղաքականություն

1. Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության հիմնադրամի գործունեության նպատակն է նպաստել Էներգախնայողության և վերականգնվող Էներգետիկայի բնագավառում ՀՀ կառավարության քաղաքական ռազմավարությունների իրականացմանը՝ վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության ոլորտում ներդրումային ծրագրերի իրականացման խթանման, շուկայի զարգացմանն աջակցության ցուցաբերման, շրջակա միջավայրի և մարդկային առողջության վրա տեխնոլոգիական ազդեցության նվազման ապահովման, Էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացման և Էներգահամակարգի կայունության ապահովման միջոցով:
2. Իր կողմից իրականացվող միջոցառումների շրջանակում R2E2 հիմնադրամը խթանելու է հանրապետության խոցելի տարածաշրջաններում «կանաչ Էներգիայի» տարածումն ու խոցելի բնակչության համար հասանելիության ապահովումը, նպաստելով «Էներգետիկ աղքատության» ծավալների նվազեցմանը, ինչպես նաև աջակցելով ցածր արտանետումներով և կլիմայական առաձգական զարգացմանը միտված մտածելակերպի որակական փոփոխությանը՝ համայնքապետարաններին, մասնավոր հատվածի ներկայացուցիչներին և այլ շահակիցներին տրամադրելով մասնագիտական օժանդակություն ջերմոցային գազի արտանետումների նվազեցման ապահովման ուղիների վերաբերյալ:
3. R2E2 հիմնադրամը իրականացնում է Արգելված Գործելաոճի նկատմամբ զրոյական հանդուրժողականության քաղաքականություն և խստորեն հավատարիմ է Արգելված Գործելաոճի դրսևորումների կանխարգելմանը և դրանց դեմ պայքարին: R2E2 հիմնադրամը, իր գործունեության հետ առնչություն ունեցող կազմակերպություններից և անհատներից ակնկալում է ազնվության ամենաբարձր չափանիշներին հավատարմություն, խրախուսում է զերծ մնալ ուղղակիորեն կամ անուղղակիորեն Արգելված Գործելաոճի դրսևորումների հանդեպ հանդուրժողականությունից, դրանք խրախուսելուց և դրանցում մասնակցություն ունենալուց, ինչպես նաև հորդորում է համապատասխան գործողություններ ձեռնարկել R2E2 հիմնադրամի կողմից իրականացվող միջոցառումներում Արգելված Գործելաոճի դրսևորումների կանխարգելման և դրանց դեմ պայքարի ուղղությամբ:
4. R2E2 հիմնադրամը պարտավոր է միջոցներ ձեռնարկել իրեն վստահված միջոցների և գույքի արդյունավետ ու ազնվության բարձրագույն մակարդակով կառավարման ապահովման, ինչպես նաև Արգելված Գործելաոճի դրսևորումներից հնարավորինս ազատ պահելու նպատակով:
5. R2E2 հիմնադրամը ճանաչում է Արգելված Գործելաոճի դրսևորումների դեմ պայքարի հաստատված միջազգային լավագույն փորձն ու քաղաքականությունները, մասնավորապես՝ Միացյալ Ազգերի

Կազմակերպության կոնվենցիան կաշառակերպության և դրան առնչություն ունեցող այլ դրսևորումների դեմ պայքարի:

6. **«Արգելված գործելաոճի վերաբերյալ R2E2 քաղաքականությունը»** նպատակ ունի սահմանել R2E2 հիմնադրամում արգելված գործելակերպն ու միջոցառումները, ներառվող անձանց և գործընկերների վարվելակերպի բարձրագույն ստանդարտների ապահովման և Արգելված Գործելաոճի դրսևորումներից զերծ մնալու վերաբերյալ պարտավորությունների շրջանակը, ինչպես նաև նկարագրում է R2E2 հիմնադրամի կողմից իրականացվող քայլերը Արգելված Գործելաոճի դրսևորումների վերաբերյալ կասկածի առկայության պարագայում:

1.2 Արգելված Գործելաոճի կանխարգելում

7. R2E2 հիմնադրամում Արգելված Գործելաոճի կանխարգելման շրջանակը բաղկացած է հետևյալ գործիքներից՝
 - Անձնակազմի վարքագծի կանոնագիրք;
 - Էթիկայի և շահերի բախման քաղաքականություն;
 - ՓԼԱՖ քաղաքականություն և ստանդարտներ;
 - Ֆիդուցիար ստանդարտներ;
 - Սեռական շահագործման, չարաշահման և ոտնձգության բացառման քաղաքականություն;

Անձնակազմի վարքագծի կանոնագիրք

8. **«R2E2 հիմնադրամի անձնակազմի վարքագծի կանոնագիրքը»** հաստատված է հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդի կողմից և նպատակ ունի սահմանել R2E2 հիմնադրամում մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականության հիմնադրույթները, ինչպես նաև պարտավորությունները, իրավունքներն ու պարտականությունները: Դրանք վերաբերում են հիմնադրամի բոլոր աշխատակիցներին՝ անկախ պաշտոնից և հաստիքի տեսակից:

Էթիկայի և շահերի բախման քաղաքականություն

9. **«R2E2 հիմնադրամի Էթիկայի և շահերի բախման քաղաքականությունը»** հաստատված է հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդի կողմից և նպատակ է հետապնդում Ներառվող անձանց համար սահմանել սկզբունքներ և էթիկական ստանդարտներ՝ պայմանավորված R2E2 հիմնադրամում իրենց պաշտոնով և պարտականությունների իրականացման շրջանակով: Դրանք վերաբերում են հիմնադրամի բոլոր աշխատակիցներին՝ անկախ պաշտոնից և հաստիքի տեսակից:

ՓԼԱՖ քաղաքականություն և ստանդարտներ

10. **«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման քաղաքականությունը»** հաստատվում է հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի կողմից և նպատակ ունի պաշտպանել R2E2 հիմնադրամը փողերի

լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դրսևորումներից, ինչպես նաև սահմանում է «Իմացեք Ձեր հաճախորդին» զննման ընթացակարգը:

Ֆիդուցիար ստանդարտներ

11. **«R2E2 հիմնադրամի Ֆիդուցիար սկզբունքներն ու ստանդարտները»** հաստատվում են հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդի կողմից և նպատակ ունեն ամրապնդել R2E2 հիմնադրամի կառավարչական և ֆինանսական կարողությունները հետևյալ սկզբունքների պահպանությունը ապահովելու նպատակով.
- i. Ֆինանսական մուտքերն ու ելքերը պատշաճ կերպով հաշվառվում են, ներառվում են հաշվետվությունների մեջ և թափանցիկ կերպով կառավարվում են՝ գործող օրենքների և ենթաօրենսդրական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան և պատշաճ հաշվետվայնությամբ;
 - ii. Հիմնադրամի կառավարմանն առնչվող տեղեկատվությունը հասանելի է, սպառիչ է և վստահելի, ամբողջական է և համապատասխանում է Ֆիդուցիար ստանդարտներին;
 - iii. Հիմնադրամի գործունեությունը իրականացվում է արդյունավետ կերպով;

Սեռական շահագործման, չարաշահման և ոտնձգության բացառման քաղաքականություն

12. **«R2E2 հիմնադրամի քաղաքականությունը սեռական շահագործման, չարաշահման և ոտնձգության բացառման վերաբերյալ»** հաստատվում է հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդի կողմից և նպատակ ունի ցուցադրել զրոյական հանդուրժողականություն այդ երևույթների նկատմամբ և սահմանում է հստակ պարտավորություններ Ներառվող անձանց համար՝ երևույթի հանդեպ զերծ մնալու ներողամտությունից, խրախուսելուց, մասնակցելուց կամ ներգրավվելուց:

1.3 Արգելված Գործելաոճի բացահայտում

13. **«Ազդարարների և վկաների պաշտպանության քաղաքականությունը»** հաստատվում է հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդի կողմից և նպատակ է հետապնդում բացահայտել Արգելված Գործելաոճի երևույթներ՝ Ազդարարներին և Վկաներին խրախուսելի և դրանց պաշտպանությունն ապահովելու միջոցով:

1.4 Արգելված Գործելաոճի հետաքննություն

14. **«Վերստուգողի տեխնիկական առաջադրանքը»** հաստատվում է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից և նպատակ ունի ապահովել խարդախության, կոռուպցիայի և այլ Արգելված Գործելաոճի (հարկադրանքի և պայմանավորվածության դրսևորումներ, չարաշահում, շահերի բախում և վրեժխնդրություն ազդարարների հանդեպ) նկատմամբ պատշաճ հետաքննության իրականացումը՝ լավագույն միջազգային փորձին համապատասխան և իրավասու մարմինների հետ սերտ համակարգմամբ կամ համագործակցությամբ:

Պետք է նաև ի նկատի ունենալ, որ պայմանավորված R2E2 հիմնադրամի աշխատակազմի չափով ու իրականացվող ծրագրերի ծավալներով որպես միջանկյալ լուծում առաջարկվում է հիմնել Վերստուգողի հաստիք կամ նախատեսել հնարավորություն Վերստուգող ֆիզիկական անձի հետ համապատասխան ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու:

15. Վերստուգողի գործառույթի ներդրումը անհրաժեշտ է իրականացնել միայն համապատասխան ֆինանսավորման ապահովումից հետո:

Հավելված V - R2E2 հիմնադրամի քաղաքականությունը Արգելված Գործելատնի վերաբերյալ

I. Ներածություն

- 1.1 Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի գործունեության նպատակն է նպաստել էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի բնագավառում ՀՀ կառավարության քաղաքական ռազմավարությունների իրականացմանը՝ վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության ոլորտում ներդրումային ծրագրերի իրականացման խթանման, շուկայի զարգացմանն աջակցության ցուցաբերման, շրջակա միջավայրի և մարդկային առողջության վրա տեխնոլոգիական ազդեցության նվազման ապահովման, էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացման և էներգահամակարգի կայունության ապահովման միջոցով:
- 1.2 Իր կողմից իրականացվող միջոցառումների շրջանակում R2E2 հիմնադրամը խթանելու է հանրապետության խոցելի տարածաշրջաններում «կանաչ էներգիայի» տարածումն ու խոցելի բնակչության համար հասանելիության ապահովումը, նպաստելով «էներգետիկ աղքատության» ծավալների նվազեցմանը, ինչպես նաև աջակցելով ցածր արտանետումներով և կլիմայական առաձգական զարգացմանը միտված մտածելակերպի որակական փոփոխությանը՝ համայնքապետարաններին, մասնավոր հատվածի ներկայացուցիչներին և այլ շահակիցներին տրամադրելով մասնագիտական օժանդակություն ջերմոցային գազի արտանետումների նվազեցման ապահովման ուղիների վերաբերյալ:
- 1.3 R2E2 հիմնադրամը իրականացնում է Արգելված Գործելատնի նկատմամբ զրոյական հանդուրժողականության քաղաքականություն և խստորեն հավատարիմ է Արգելված Գործելատնի դրսևորումների կանխարգելմանը և դրանց դեմ պայքարին: R2E2 հիմնադրամը, իր գործունեության հետ առնչություն ունեցող կազմակերպություններից և անհատներից ակնկալում է ազնվության ամենաբարձր չափանիշներին հավատարմություն, խրախուսում է զերծ մնալ ուղղակիորեն կամ անուղղակիորեն Արգելված Գործելատնի դրսևորումների հանդեպ հանդուրժողականությունից, դրանք խրախուսելուց և դրանցում մասնակցություն ունենալուց, ինչպես նաև հորդորում է համապատասխան գործողություններ ձեռնարկել R2E2 հիմնադրամի կողմից իրականացվող միջոցառումներում Արգելված Գործելատնի դրսևորումների կանխարգելման և դրանց դեմ պայքարի ուղղությամբ:
- 1.4 R2E2 հիմնադրամը պարտավոր է միջոցներ ձեռնարկել իրեն վստահված միջոցների և գույքի արդյունավետ ու ազնվության բարձրագույն մակարդակով կառավարման ապահովման, ինչպես նաև Արգելված Գործելատնի դրսևորումներից հնարավորինս ազատ պահելու նպատակով:
- 1.5 R2E2 հիմնադրամը ճանաչում է Արգելված Գործելատնի դրսևորումների դեմ պայքարի հաստատված միջազգային լավագույն փորձն ու քաղաքականությունները, մասնավորապես՝ Միացյալ Ազգերի Կազմակերպության կոնվենցիան կաշառակերության և դրան առնչություն ունեցող այլ դրսևորումների դեմ պայքարի:

II. Նպատակ

- 2 «Արգելված գործելաոճի վերաբերյալ R2E2 քաղաքականությունը» նպատակ ունի սահմանել R2E2 հիմնադրամում արգելված գործելակերպն ու միջոցառումները, Ներառվող անձանց և գործընկերների վարվելակերպի բարձրագույն ստանդարտների ապահովման և Արգելված Գործելաոճի դրսևորումներից զերծ մնալու վերաբերյալ պարտավորությունների շրջանակը, ինչպես նաև նկարագրում է R2E2 հիմնադրամի կողմից իրականացվող քայլերը Արգելված Գործելաոճի դրսևորումների վերաբերյալ կասկածի առկայության պարագայում:

III. Սահմանումներ

- 3.1 Սույն քաղաքականության նպատակով ստորև ներկայացված սահմանումներն ունեն հետևյալ իմաստը՝

- **«Շահերի բախում»** նշանակում է իրավիճակ, երբ կողմը կամ դրա անձնակազմի ցանկացած անդամ ներգրավված է որոշման կայացման գործընթացում և ունի շահ (կամ կարող է նման տպավորություն ստեղծել), որը կարող է ոչ պատշաճ ձևով ազդել վերջինիս կողմից պաշտոնական լիազորությունների ու պայմանագրային պարտավորությունների իրականացմանը, ինչպես նաև համապատասխան օրենքների և ենթաօրենսդրական ակտերի հետ համապատասխանության ապահովմանը;
- **«Իրականացնող մարմին»** նշանակում է մարմին, որի միջոցով ծախսվում են R2E2 հիմնադրամի միջոցները կամ որը հանդիսանում է հիմնադրամից ենթադրամաշնորհի շահառու և/կամ ցանկացած մարմին որը իրականացնում է հիմնադրամի հետ առնչվող միջոցառում/ծրագիր, կամ դրա մի մասը;
- **«R2E2 հիմնադրամին առնչվող գործողություն»** նշանակում է ցանկացած գործողություն, որը ֆինանսավորվում, կառավարվում կամ աջակցություն է ստանում R2E2 հիմնադրամի կողմից (իր, դոնորային կամ պետ քույրերի միջոցների հաշվին) կամ ցանկացած գործողություն որը նյութական ազդեցություն ունի կամ կարող է ունենալ R2E2 հիմնադրամի վրա կամ այլ կերպով վերաբերում է հիմնադրամին;
- **«R2E2 հիմնադրամի անձնակազմ»** նշանակում է հիմնադրամի ցանկացած աշխատակից կամ անհատի կարգավիճակով ցանկացած ձևով ներգրավված խորհրդատու, որոնք R2E2 հիմնադրամի համար իրականացնում են պաշտոնական գործառնություն;
- **«Անմիջական ընտանիքի անդամ»** դա ամուսինն է, երեխան, մայրը, հայրը, եղբայրը կամ քույրը;
- **«Անձնակազմի կառավարման իրավական շրջանակը»** ներառում է բոլոր քաղաքականությունները, ցուցումները, ընթացակարգերն ու ցուցումները որոնք կարգավորում են R2E2 անձնակազմի գործողությունները;
- **«ոչ պատշաճ վարքագիծը»** դա R2E2 աշխատակցի կողմից Անձնակազմի կառավարման իրավական շրջանակում սահմանված սկզբունքներին ի հակառակ կատարված գործողություն է, ինչպես նաև իրականացնող մարմինների ու ենթակապալառուների կողմից R2E2 հիմնադրամի էթիկայի և շահերի բախման քաղաքականություններին ոչ համապատասխանող գործողությունների իրականացումն է;

- **«Ապօրինությունը»** նշանակում է վարքագիծ, որը խախտում է R2E2 հիմնադրամի քաղաքականությունները կամ որի իրականացումը պարունակում է հիմնադրամի համար նշանակալի ռիսկ, քանի որ այն վնասակար ազդեցություն ունի հիմնադրամի շահերի, հեղինակության, գործունեության կամ կառավարման վրա: Անօրինականությունը ներառում է բայց չի սահմանափակվում Սխալ վարքագիծը, Արգելված Գործելատճը և Շահերի բախումը;

3.2 Սույն քաղաքականության նպատակով Արգելված Գործելատճը նկարագրող և ստորև ներկայացված սահմանումներն ունեն հետևյալ իմաստը՝

- **«Կոռուպցիա»** նշանակում է ուղղակի կամ անուղղակի առաջարկել, տրամադրել, ստանալ և պահանջել արժեք ունեցող որևէ իր (ներառյալ, բայց չսահմանափակվելով նվերներով, պարգևներով, զվարճանքներով, բարիքներով, հրավերներով և ցանկացած տեսակի օգուտներով), որը ներառում է լիազորությունների չարաշահում և որով կարող են ոչ պատշաճ կերպով ազդել այլ անհատի կամ ընկերության գործունեության վրա;
- **«Խարդախությունը»** դա գործողություն կամ բացթողում է, ներառյալ նաև ոչ պատշաճ ներկայացում, որը գիտակցաբար մոլորեցնում է կամ փորձում է մոլորեցնել անհատին կամ ընկերությանը ֆինանսական կամ այլ տեսակի շահի ձեռքբերման, ինչպես նաև որևէ պարտավորությունից խուսափելու համար;
- **«Հարկադրանք»** ուղղակիորեն կամ անուղղակի կերպով վնասելը կամ սպառնալը անհատին կամ կազմակերպությանը՝ վտանգ ներկայացնելով նրա գույքին և ազդելով այդ անհատի կամ ընկերության գործունեության վրա;
- **«Դավադրություն»** երկու կամ ավելի ընկերության, անհատների միջև պայմանավորվածություն, որն ուղղված է ոչ պատշաճ նպատակի, ներառյալ ոչ պատշաճ ազդեցությանը այլ անհատի և/կամ ընկերության վրա;
- **Խոչընդոտող գործողություն.** սա ներառում է ապացույց հանդիսացող նյութի դիտավորությամբ ոչնչացնելը, աղավաղելը, փոխակերպելը կամ թաքցնելը; քննիչներին սխալ պնդումներ ներկայացնելը, որը միտված է ուսումնասիրության խափանմանը; սպառնալը, ոտնձգություն իրականացնելը կամ ահաբեկելը որևէ կազմակերպության և/կամ անհատի՝ կանխելու նրա կողմից բացահայտելու հետաքննությանն առնչվող հարցերի վերաբերյալ իր և/կամ իրենց տեղեկատվության տրամադրումը, կամ կանխելու համար հետաքննությունը շարունակելը; կամ էականորեն խոչընդոտելը R2E2 հիմնադրամի աուդիտի կամ տեղեկատվության հասանելիության իրավունքների իրագործմանը;
- **«Ուտնձգություն»** անհարգի բանավոր կամ ֆիզիկական վարքագիծ, որն անցանկալիորեն միջամտում է աշխատանքին կամ առաջացնում է խոչընդոտ, թշնամանք կամ անհարգալի միջավայր;
- **«Փողերի լվացումը»** նշանակում է՝
 1. գույքի փոխակերպումը կամ փոխանցումը՝ իմանալով, որ այդ գույքը ստացվել է հանցագործությունից՝ գույքի ապօրինի ծագումը թաքցնելու կամ քողարկելու նպատակով կամ հանցագործության կատարմանը մասնակցող ցանկացած անձին օգնելու խուսափելու իրավական հետևանքներից;

2. իրական էության, աղբյուրի, գտնվելու վայրի, տեղաբաշխման, տեղաշարժի, գույքի նկատմամբ իրավունքների կամ սեփականության կամ իրավունքների թաքցնումը կամ քողարկումը, իմանալով, որ այդպիսի գույքը ձեռք է բերվել հակաօրինական ճանապարհով; և
 3. գույք ձեռք բերելը, տիրապետելը կամ օգտագործելը իմանալով, որ այդ գույքը ձեռք է բերվել հակաօրինական ճանապարհով;
- **«Վրեժխնդրություն ազդարարների կամ վկաների դեմ»** նշանակում է ցանկացած վնասակար գործողություն՝ ուղղակի կամ անուղղակի, առաջարկված, սպառնացող կամ ձեռնարկված Ազդարարի կամ Վկայի (կամ դրանց հետ փոխկապակցված անձի) նկատմամբ՝ պայմանավորված Ազդարարի կամ Վկայի կողմից կասկածվող սխալ գործելու կամ R2E2 հիմնադրամի հետաքննության հետ համագործակցությամբ;
- **«Ահաբեկչության ֆինանսավորում»** նշանակում է Ահաբեկչության Ֆինանսավորմանը Հակազդելու Վերաբերյալ Միջազգային Կոնվենցիայի հոդված 2-ի հատկանիշներին համապատասխան հանցագործություն;

IV. Հիմնական սկզբունքները

- 4.1 R2E2 հիմնադրամը իրականացնում է Արգելված գործելաոճի նկատմամբ զրոյական հանդուրժողականության քաղաքականություն;
- 4.2 R2E2 հիմնադրամի անձնակազմն ու իրականացնող կազմակերպությունները պետք է գործեն ազնվության, հաշվետվայնության և արդյունավետության բարձրագույն չափանիշների համապատասխան, զերծ մնան հիմնադրամին առնչվող գործունեության ընթացքում ուղղակի կամ անուղղակի կերպով Արգելված Գործելաոճի դրսևորումների հանդեպ հանդուրժողականությունից, խրախուսումից, մասնակցությունից և ներգրավումից, ինչպես նաև համապատասխան միջոցներ ձեռնարկեն Շահերի Բախման դրսևորումները կանխելու, մեղմելու և/կամ ուղղելու համար;
- 4.3 Ապօրինությունների վերաբերյալ ցանկացած կասկածի պարագայում անհրաժեշտ է տեղեկացնել հիմնադրամի Վերստուգողին, որն իր հերթին պետք է իրականացնի հետաքննություն R2E2 հիմնադրամի Ազդարարների և վկաների պաշտպանության մասին քաղաքականության պահանջներին և ընթացակարգերին, Վերստուգողի կողմից հետաքննությունների իրականացման ստանդարտների և հիմնադրամի այլ քաղաքականություններին, ընթացակարգերին և ուղեցույցներին համապատասխան;
- 4.4 Վերստուգողը պետք է ակտիվ միջոցներ ձեռնարկի (ներառյալ նախաձեռնի ընթացիկ ուսումնասիրություններ), որպեսզի ապահովի հիմնադրամին առնչություն ունեցող ծրագրերում և գործողություններում Արգելված Գործելաոճի երևույթների կանխարգելումը, ինչպես նաև պետք է հետաքննի Արգելված Գործելաոճի կասկածանքների վերաբերյալ տեղեկատվությունները, դրանց արժանահավատությունը ստուգելու նպատակով, և անհրաժեշտության դեպքում խորհուրդ տա կարգապահական կամ մեղման գործողությունների վերաբերյալ՝ իր տեխնիկական առաջադրանքի և R2E2 հիմնադրամի յալ քաղաքականություններին, ստանդարտներին և գործընթացներին համապատասխան;

- 4.5 R2E2 հիմնադրամը կարող է վարչական կամ կարգապահական պատժամիջոցների ենթարկել ցանկացած անձի կամ կազմակերպության, ով խախտել է սույն Քաղաքականությամբ ամրագրված սկզբունքները;
- 4.6 R2E2 հիմնադրամը իրավասու է փոխհատուցում պահանջել հիմնադրամի հասույթների և այլ միջոցների մասով, որոնք ոչ պատշաճ կերպով են օգտագործվել աշխատակցի կամ իրականացնող կազմակերպության կողմից հիմնադրամի կողմի իրականացվող ծրագրերում;

V. R2E2 հիմնադրամի աշխատակիցների պարտականությունները

- 5.1 R2E2 հիմնադրամի ողջ անձնակազմը պետք է զերծ մնա ուղղակի կամ անուղղակի կերպով Արգելված Գործելատճի երևույթները հանդուրժելուց, դրանք խրախուսելուց և դրանցում մասնակցություն ցուցաբերելուց: R2E2 հիմնադրամի աշխատակիցները պարտավոր են խուսափել իրավիճակներից և գործողություններից, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ հիմնադրամի վրա, վտանգի ենթարկել դրա բնականոն գործունեությունը, բերել իրական կամ ենթադրելի Շահերի Բախման երևույթներին այնպես, ինչպես նշված է Մարդկային ռեսուրսների Իրավական Շրջանակում, համապատասխան պայմանագրերում կամ Էթիկայի ու շահերի բախման մասին համապատասխան քաղաքականությունում;
- 5.2 R2E2 հիմնադրամի աշխատակիցները չպետք է խրախուսեն որևէ անձի կամ կազմակերպության խախտել սույն քաղաքականությունը;
- 5.3 Ինչպես սահմանվում է Ազդարարների և Վկաների պաշտպանության մասին քաղաքականության փաստաթղթում ու հիմնադրամի այլ համապատասխան քաղաքականություններում և ընթացակարգերում, անձնակազմը պարտավոր է տեղեկացնել հիմնադրամի գործունեության հետ առնչություն ունեցող գործողություններում կասկածելի Ապօրինությունների վերաբերյալ;
- 5.4 Նշված պարտավորությունները չկատարելը համարվում է պայմանագրի խախտում;

VI. Իրականացնող կազմակերպությունների պարտականությունները

- 6.1 Իրականացնող կազմակերպությունները R2E2 հիմնադրամի կողմից ֆինանսավորվող ծրագրերի իրականացման ժամանակ պետք է պահպանեն ազնվության, հաշվետվայնության և արդյունավետության բարձրագույն ստանդարտներ, խուսափեն (ուղղակիորեն կամ անուղղակի կերպով) Արգելված Գործելատճի երևույթները հանդուրժելուց, խրախուսելուց, դրանցում մասնակցելուց կամ ներգրավվելուց, ինչպես նաև միջոցներ ձեռնարկեն շահերի բախման երևույթները կանխելու, մեղմելու և ուղղելու ուղղությամբ;
- 6.2 R2E2 հիմնադրամի համապատասխան քաղաքականությունների, ստանդարտների և ընթացակարգերի համապատասխան և համաձայն կազմակերպության և հիմնադրամի միջև կնքված պայմանագրի դրույթների, իրականացնող կազմակերպությունները պարտավոր են միջոցներ ձեռնարկել հետևյալ նպատակներով՝

- Ապահովել R2E2 հիմնադրամի կողմից իրականացվող միջոցառումների համապատասխանությունը սույն քաղաքականության հիմնադրույթներին;

- R2E2 հիմնադրամին արագ բացահայտել հիմնադրամի գործունեության առնչությամբ իրական կամ ենթադրյալ շահերի բախման երևույթները;
- Կանխարգելել R2E2 հիմնադրամի կողմից իրականացվող գործողությունների կապակցությամբ Արգելված Գործելաձևի դրսևորումների երևան գալը, ներառյալ (բայց չսահմանափակվելով) ընդունելով, իրականացնելով և հարկադրելով համապատասխան Ֆիդուցիար և կառավարչական գործողությունների և ինստիտուցիոնալ լուծումների կիրառումը՝ R2E2 հիմնադրամի հասոյթների (դրամաշնորհ, վարկ, պայմանագիր կամ ֆինանսավորման այլ տեսակ) իրենց նպատակին ծառայելու ապահովման նպատակով;
- Արագ տեղեկացնել R2E2 Հիմնադրամին, վերջինիս կողմից իրականացվող ծրագրերում բացահայտված, կասկածելի կամ ենթադրյալ Արգելված Գործելաձևի դրսևորումների վերաբերյալ;
- Հետաքննել R2E2 հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում Արգելված գործելաձևի բացահայտված, կասկածելի կամ ենթադրյալ երևույթները, ինչպես նաև նախնական և վերջնական արդյունքների մասին տեղեկացնել հիմնադրամին;
- R2E2 հիմնադրամի շահերի պաշտպանության նպատակով R2E2 հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում Արգելված գործելաձևի բացահայտված, կասկածելի կամ ենթադրյալ երևույթների նկատմամբ պատշաճ կերպով արձագանքել, մեղմել և տրամադրել փոխհատուցում, ինչպես նաև ապահովվել նման երևույթների կրկնության բացառումը;
- Ամբողջությամբ համագործակցել R2E2 հիմնադրամի և Վերստուգողի հետ R2E2 հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերում Արգելված Գործելաձևի երևույթների հետաքննության գործընթացներում և ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները ներգրավված բոլոր անհատների և միավորների ամբողջական մասնակցության ապահովման նպատակով;
- Ապահովել, որպեսզի R2E2 հիմնադրամի կողմից պատժամիջոցների ենթարկված բոլոր անհատներն ու միավորները չմասնակցել հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերում ի հակառակ վարչական պատժամիջոցներին:

6.3 Ելնելով R2E2 հիմնադրամի հետ կնքված պայմանագրերի դրույթներից իրականացնող կազմակերպությունները, որոնք ներգրավվել են R2E2 հիմնադրամի հետ առնչություն ունեցող ծրագրերի իրականացման նպատակով պարտավոր են ապահովել միջոցների նպատակային օգտագործումը: Սույն պարտավորության իրականացման նպատակով համապատասխան դրույթներ կարող են նախատեսվել իրականացնող կազմակերպության հետ կնքվելիք պայմանագրերում:

6.4 Ցանկացած իրականացնող կազմակերպություն կարող է R2E2 հիմնադրամից կամ Վերստուգողից խորհրդատվություն ստանալ իր կողմից սույն հոդվածների պահանջները բավարարելու նպատակով անհրաժեշտ գործողությունների իրականացման վերաբերյալ:

VII. R2E2 հիմնադրամի կողմից Արգելված Գործելաձևի երևույթների բացահայտման պարագայում

R2E2 անձնակազմ

- 7.1 Անձնակազմի ներկայացուցիչը ով ուղղակիորեն հանդուրժել է, խրախուսել է, մասնակցել է կամ ներգրավված է եղել Արգելված Գործելատճի դրսևորումների կարող է ենթակվել կարգապահական պատասխանատվության, այնպես ինչպես սահմանված է R2E2 հիմնադրամի և աշխատակցի միջև կնքված պայմանագրով;
- 7.2 Համապատասխան աշխատակցի նկատմամբ կարգապահական պատժամիջոցները սահմանվում և իրականացվում են R2E2 հիմնադրամի տնօրենի կողմից: Տնօրենը պետք է առաջնորդվի Վերստուգողի կողմից արված բացահայտումներով և առաջարկություններով, որոնք պարունակվում են Վերստուգողի կողմից հետաքննության արդյունքում կազմված զեկույցում աշխատակցի կողմից կասկածելի Ապօրինությունների ուսումնասիրության վերաբերյալ:

Իրականացնող կազմակերպություններ

- 7.3 Վերստուգողը պարտավոր է հետաքննել իրականացնող կազմակերպությունների կողմից կասկածվող Ապօրինությունները R2E2 հիմնադրամի հետաքննական ստանդարտներին և գործընթացներին համապատասխան և պարտավոր է ներկայացնել բացահայտումներն ու առաջարկությունները տնօրենին և Էթիկայի ու Ներքին Աուդիտի Կոմիտեին: Այդ նպատակով Վերստուգողը հետաքննություն իրականացնելիս պետք է համագործակցի իրականացնող կազմակերպությունների համապատասխան ստորաբաժանումների հետ՝ առաջնորդվելով R2E2 հիմնադրամի և իրականացնող կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերով;
- 7.4 R2E2 հիմնադրամը իրավասու է մերժել կամ որակագրել R2E2 Հիմնադրամի կողմից իրականացվող գործողության վերաբերյալ իրականացնող կազմակերպության կողմից ներկայացված հայտը եթե բացահայտվել է, որ իրականացնող կազմակերպությունն ուղղակիորեն կամ անուղղակի կերպով հանդուրժել է, խրախուսել է, մասնակցել կամ ներգրավված է եղել Արգելված Գործելատճի ցանկացած դրսևորումներում:
- 7.5 R2E2 հիմնադրամը իրավասու է (պայմանավորված հիմնադրամի և իրականացնող կազմակերպության միջև կնքված պայմանագրի դրույթներով) պատժամիջոցներ սահմանել իրականացնող կազմակերպության նկատմամբ եթե բացահայտվել է, որ իրականացնող կազմակերպությունն ուղղակիորեն կամ անուղղակի կերպով հանդուրժել է, խրախուսել է, մասնակցել կամ ներգրավված է եղել Արգելված Գործելատճի ցանկացած դրսևորումներում: Վարչական պատժամիջոցները կարող են ներառել՝
- Պաշտոնական նամակի տեսքով տրվող գրավոր նկատողություն;
 - R2E2 հիմնադրամի կողմից հատկացված բայց դեռ չտրամադրված միջոցների սառեցում կամ չեղարկում (նաև մասնակի);
 - Անորոշ կամ որոշակի ժամանակահատվածի համար իրականացնող կազմակերպության որակագրկում՝
 - ✓ R2E2 հիմնադրամի կողմից հետագայում ֆինանսավորման ստացման նպատակով;

- ✓ R2E2 հիմնադրամի կողմից հետագայում պայմանագրի շնորհման նպատակով;
 - ✓ R2E2 հիմնադրամի կողմից հետագայում ֆինանսավորվող պայմանագրին մաս կազմելու նպատակով;
 - ✓ R2E2 հիմնադրամի կողմից հետագայում իրականացվող ծրագրերին այլ կերպ մասնակցելու նպատակով;
- Պայմանական արգելքից դուրս մնալը՝ պայմանավորված իրականացնող կազմակերպության կողմից սահմանված ժամկետներում որոշակի շտկումների իրականացման՝ որպես արգելանքից խուսափելու պայման: Այն դեպքում, երբ իրականացնող կազմակերպությունը սահմանված ժամկետներում չի ցուցադրում իր համապատասխանությունը սահմանված պայմաններին, ապա արգելքը կարող է ինքնաբերաբար ուժի մեջ մտնել որոշակի ժամկետով. և
- Միջոցների վերականգնում՝ պայմանավորված ոչ պատշաճ կերպով օգտագործված կամ ուղղորդված R2E2 հասույթների կամ այլ միջոցների հետ;

VIII. Ուղղորդումներ

- 8.1 Վերստուգողը, առաջնորդվելով Վերստուգողի Տեխնիկական Առաջադրանքով և Մարդկային Ռեսուրսների Իրավական Շրջանակով պարտավոր է իր լիազորություններից դուրս գտնվող կասկածելի Ապօրինությունների վերաբերյալ յուրաքանչյուր դեպք ուղղորդել R2E2 հիմնադրամի համապատասխան մարմիններին;
- 8.2 Այն դեպքերում, երբ հետաքննության իրականացման արդյունքում Վերստուգողը եզրակացնում է, որ տեղի է ունեցել ապօրինի կամ քրեական գործողություն ապա Վերստուգողը կարող է տնօրենին խորհուրդ տալ դիմել իրավասու մարմիններին: Տնօրենը, Էթիկայի ու Աուդիտի Կոմիտեի հետ քննարկումների արդյունքում կարող է որոշում ընդունել արդյոք առկա է նման կարիք:

IX. Հաղորդակցման և կարողությունների հզորացման միջոցառումներ

- 9.1 Վերստուգողը պետք է ակտիվորեն R2E2 հիմնադրամի աշխատակիցներին, իրականացնող կազմակերպություններին և այլ գործընկերներին տեղեկացնի այս և ամբողջականությանն առնչվող այլ քաղաքականությունների վերաբերյալ;
- 9.2 Քաղաքականության արդյունավետ իրականացումն խթանելու նպատակով Վերստուգողը պարտավոր է պարբերաբար իրականացնել վերապատրաստման դասընթացներ;

X. Քաղաքականության կառավարումը, վերահսկումը, հաշվետվայնությունն ու վերանայումը

- 10.1 Վերստուգողը պատասխանատու է Քաղաքականության իրականացման համար: Վերստուգողը պետք է համագործակցի R2E2 հիմնադրամի այլ ստորաբաժանումների հետ՝ Քաղաքականության արդյունավետ իրականացման ապահովման նպատակով;

- 10.2 Վերստուգողը տարեկան կտրվածքով զեկույց է ներկայացնում Հոգաբարձուների Խորհրդին սույն քաղաքականության իրականացման վերաբերյալ;
- 10.3 Կառավարչական, պայմանագրային և ֆինանսական ստորաբաժանումները պարտավոր են Վերստուգողի հետ համագործակցությամբ իրականացնել սույն քաղաքականությունը համապատասխան պայմանագրային ապահովությունների ձեռքբերման միջոցով, ինչպես նաև ապահովելով իրականացնող կազմակերպությունների կողմից սույն քաղաքականության պահանջների իրականացումը;
- 10.4 Վերստուգողը պարտավոր է ակտիվորեն դիտարկել և վերլուծել սույն քաղաքականության իրականացման ընթացքը;
- 10.5 Էթիկայի և Աուդիտի Կոմիտեն պարտավոր է երեք տարին մեկ Վերստուգողի աջակցությամբ հաշվետվություն ներկայացնել R2E2 հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդին սույն քաղաքականության իրականացման, ինչպես նաև հնարավոր փոփոխությունների վերաբերյալ;

XI. Ուժի մեջ մտնելը

- 11.1 Սույն քաղաքականությունը մտնում է ուժի մեջ R2E2 հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդի կողմից հաստատելուց հետո:

Հավելված VI - Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի անձնակազմի վարքագծի կանոնագիրք

1. Նպատակ

- 1.1 Սույն Ուղեցույցի նպատակն է ներկայացնել Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի մարդկային ռեսուրսների քաղաքականությունը և սահմանել նրա աշխատակազմի իրավունքներն ու պարտականությունները: Սույն ուղեցույցը վերաբերում է անձնակազմի բոլոր անդամներին՝ անկախ նշանակման տեսակից:

2. Քաղաքականություն

- 2.1 Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամն իր գործունեության համար պահանջում է բարձր որակավորում ունեցող, նվիրված և մոտիվացված անձնակազմ՝ տարբեր հմտություններով: Նման անձնակազմ ներգրավելու, մոտիվացնելու և պահելու համար Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը ձգտում է ապահովել աշխատանքի մրցունակ պայմաններ և առաջնորդվելու է իր աշխատակազմի կառավարման արդար, անաչառ և թափանցիկ քաղաքականությամբ և գործելակերպով:
- 2.2 Անձնակազմի աշխատանքի ընդունումը, առաջխաղացումը և նշանակումը կիրականացվի առանց սեռի, ռասայի, ազգության կամ կրոնական խտրականության:
- 2.3 Արդյունավետության և իրավասության ամենաբարձր մակարդակի ապահովման գերակա նկատառումներից ելնելով, Հիմնադրամը միշտ կձգտի իր անձնակազմում գենդերային հավասարակշռության:
- 2.4 Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը անձնակազմին կտրամադրի աշխատանքային պայմաններ, որոնք կհամապատասխանեն նրանց նշանակման պայմաններին, կատարողականին և վարքագծին, ինչպես նաև Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի արդյունավետ կառավարմանը:
- 2.5 Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը համակարգված կերպով կգնահատի աշխատատեղերի հարաբերական մակարդակը և նույնանման պարտականությունների համար արդար վարձատրությունը, ինչպես Հիմնադրամի շրջանակներում, այնպես էլ այլ համապատասխան կազմակերպությունների համեմատ: Վերականգնվող էներգիայի և էներգախնայողության հիմնադրամը կպարգևատրի անձնակազմին՝ ըստ կատարողականի, աշխատանքի երկարատևության և այլ համապատասխան գործոնների: Հիմնադրամը չի վճարի կամ փոխհատուցի որևէ հարկ, որը հնարավոր է վճարման ենթակա լինել անձնակազմի կամ փորձագետների կողմից:
- 2.6 Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը պարբերաբար կվերանայի անձնակազմի աշխատանքը՝ լավագույնս օգտագործելու նրանց ծառայություններն ու փորձը, ճանաչելու նրանց

ձեռքբերումները և բացահայտելու նրանց վերապատրաստման և զարգացման կարիքները:

- 2.7 Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը կձգտի պահպանել կատարողականի բարձր մակարդակ և ակտիվորեն կօգնի անձնակազմին կատարելագործել իրենց հմտությունները և ընդլայնել նրանց փորձը տարբեր ֆունկցիոնալ ոլորտներում : Հիմնադրամը կապահովի, որ կարիերայի զարգացումը լինի անձնակազմի կառավարման անբաժանելի մասը:
- 2.8 Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը կձգտի լիարժեք և արդար հնարավորություններ ընձեռել իրավասու անձնակազմին՝ առաջխաղացման և թափուր աշխատատեղերը զբաղեցնելու համար վերջիններիս առկայության դեպքում: Առաջխաղացման համար ընտրությունը լինելու է մրցակցային՝ հիմնվելով սահմանված չափանիշների և անձնակազմի հարաբերական արժանիքների վրա: Ընտրությունը կկատարվի համապատասխան սահմանված ընթացակարգերի՝ առավել հարմար թեկնածուի նշանակման համար: Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի ղեկավարությունը մշտապես կաշխատի աշխատակազմի ներկայացուցչի հետ սերտ համագործակցությամբ՝ անձնակազմի շահերը պաշտպանելու նպատակով:
- 2.9 Տնօրենը սերտորեն խորհրդակցելու է Աշխատակազմի ներկայացուցչի հետ՝ համաձայն գործող օրենսգրքի, նախքան Հոգաբարձուների խորհրդին կադրային նոր քաղաքականություն առաջարկելը:
- 2.10 Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը կհետևի պատշաճ ընթացակարգին անձնակազմի կառավարման բոլոր ոլորտներում, մասնավորապես, երբ նախաձեռնում է և որոշումներ կայացնում աշխատողների աշխատանքի կամավոր կամ վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ:
- 2.11 Բողոքների առաջացման դեպքում, ֆիքսված ժամկետային աշխատակիցներն իրավունք կունենան, առանց վրեժխնդրության վախի, պահանջել վարչական վերանայում, դիմել բողոքարկման ընթացակարգերին կամ, որպես վերջնական միջոց, բարձրացնել այդ բողոքը տնօրենին, և այն դեպքերում, երբ այդպիսի բողոքը վերաբերում է Տնօրենի վարքագծին՝ Հոգաբարձուների խորհրդին, որի որոշումը պարտադիր է լինելու Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի և անձնակազմի համապատասխան անդամի համար:
- 2.12 Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը կպաշտպանի անձնակազմին և նախկին աշխատակիցներին երրորդ անձանց կողմից իրենց պաշտոնական կարգավիճակում կատարած գործողությունների արդյունքում նրանց դեմ հարուցված պահանջներից, պայմանով, որ նման գործողությունները եղել են իրենց լիազորությունների շրջանակում, և նրանք գործել են բարեխղճորեն և համաձայն R2E2 Հիմնադրամի աշխատակազմի վարքագծի Կանոնագրքի: Համապատասխան դեպքերում R2E2 Հիմնադրամը կհատուցի անձնակազմին կամ նախկին աշխատակիցներին նման պահանջներից բխող ողջամիտ և անհրաժեշտ իրավական ծախսերի և դատավճիռների և լուծումների համար:

- 2.13 Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը չի ների կամ հանդուրժի ոտնձգության որևէ ձև: Համապատասխան հարցերը կարգավորվում են Սեռական շահագործման, չարաշահման և ոտնձգությունների քաղաքականությամբ (Գործառնական ձեռնարկի Հավելված IX):

3. Հաստատում

- 1.2 Նշանակվելուց հետո անձնակազմի յուրաքանչյուր անդամ պետք է գրավոր ստորագրի հետևյալ հաստատումը.

«Հանդիսավոր կերպով հաստատում եմ, որ.

Կկատարեմ իմ պարտականությունները իմ հնարավորությունների սահմաններում այնպես, որ առաջ տանի Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի շահերը: Ես կարդացել և հասկացել եմ R2E2 Հիմնադրամի վարչական քաղաքականությունը, վարչական ուղեցույցները և համաձայն եմ հետևել դրանց, ինչպես նաև դրանցում եղած ցանկացած լրացում կամ փոփոխություն, որը կարող է ժամանակ առ ժամանակ արվել.

Ես չեմ ընդունի Հիմնադրամի հետ կապ չունեցող որևէ մարմնի կամ երրորդ կողմի՝ իմ պարտականությունների կատարման վերաբերյալ որևէ հրահանգ:»:

4. Աշխատակազմի անդամների պարտականություններն ու պարտավորություններ

4.1 Վարքագծի կանոններ

Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը անձնակազմից կպահանջի մշտապես դրսևորել Հիմնադրամի աշխատակցի իրենց կարգավիճակին հարիր վարքագիծ: Ակնկալվում է, որ նրանք կպահպանեն ամենաբարձր էթիկական չափանիշները՝ դրսևորելով ազնվության և Հիմնադրամի շահերի նկատմամբ մտահոգության բարձր աստիճան, խուսափելով իրավիճակներից և գործողություններից, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ Հիմնադրամի վրա, վտանգել նրա գործունեությունը կամ հանգեցնել իրական կամ ենթադրյալ շահերի բախման: Հիմնադրամի աշխատակազմի վարքագծի կանոնները ներկայացված են ստորև: Տնօրենը կարող է կարգապահական միջոցներ կիրառել այն աշխատակիցների նկատմամբ, որոնց վարքագիծը հակասում է սույն Կանոնագրքին: Բոլոր աշխատակիցներից կպահանջվի պատշաճ ուշադրություն դարձնել ծախսերի արդյունավետությանը և իրենց աշխատանքի արտադրողականությանը, ինչպես նաև պետք է ամեն ջանք գործադրեն՝ նվազագույնի հասցնելու իրենց գործողությունների ազդեցությունները կլիմայի փոփոխության վրա:

4.2 Սահմանումներ

Սույն Վարքագծի Կանոնակարգի նպատակների համար.

ա) «Անմիջական ընտանիք» նշանակում է ամուսին, երեխա, մայր, հայր, եղբայր կամ քույր.

բ) «Աշխատակազմի անդամներ» նշանակում է ողջ անձնակազմը՝ անկախ նշանակման տեսակից.

գ) «Չհրապարակված տեղեկատվություն» նշանակում է ցանկացած տեղեկատվություն, որը չի հրապարակայնացվել՝ համաձայն տեղեկատվության բացահայտման քաղաքականության դրույթների:

4.3 Կիրառում

Այս բաժինը վերաբերում է անձնակազմի բոլոր անդամներին և նախատեսված դեպքում նաև անձնակազմի անմիջական ընտանիքի անդամներին: Այն դեպքում, երբ այս բաժինը ազդում է աշխատակիցների անմիջական ընտանիքների շահերի և գործունեության վրա կամ պահանջում է նրանց առնչվող բացահայտումներ, այդ աշխատակիցները պետք է համապատասխան հարցումներ կատարեն և գործադրեն իրենց լավագույն ջանքերը՝ ապահովելու սույն Բաժին 4-ի համապատասխանությունը ընտանիքի այդպիսի անմիջական անդամների կողմից: Անձնակազմի անդամները պետք է կատարեն այնպիսի բացահայտումներ, որոնք պահանջվում են սույն Բաժնի կողմից՝ իրենց իմացության սահմաններում նման հարցումներից հետո:

4.4 Վարքագծի ընդհանուր սկզբունքներ

ա) Անձնակազմի կարգավիճակը և գործողությունների պատշաճությունը

Գործառույթների կատարման ընթացքում աշխատակիցները բացառապես պատասխանատու են միայն Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության հիմնադրամին: Աշխատակիցները պետք է խուսափեն որևէ գործողությունից, և, մասնավորապես, ցանկացած հայտարարությունից, որը կարող է անբարենպաստ կերպով արտացոլել իրենց՝ որպես Հիմնադրամի աշխատակիցների դիրքը:

Նրանք միշտ պետք է պահպանեն զսպվածություն ու նրբանկատություն, որն իրենց վերապահված է իրենց գործառույթների ուժով, աշխատակիցներից պահանջվում է գործնական հարցերում ցուցաբերել առավելագույն հայեցողություն:

բ) Ներքին բողոքարկում և բողոքարկման ընթացակարգեր

Աշխատակիցների՝ նրանց աշխատանքի պայմանների վերաբերյալ պահանջների քննարկման և լուծման համար վարչական վերանայման և բողոքարկման կարգը սահմանվում է սույն օրենսգրքով և նախատեսվում է այդ պահանջները լուծելու համար ազգային դատարան դիմելու իրավունք:

4.5 Տեղեկատվության բացահայտում և դրա օգտագործումը մասնավոր շահի համար

Աշխատակազմի անդամները, բացառությամբ իրենց ծառայողական պարտականությունների կատարման կամ հստակ թույլտվության, չեն կարող.

- Բացահայտել իրենց պաշտոնական դիրքի հետ կապված իրենց հայտնի չիրապարակված և/կամ գաղտնի տեղեկատվություն Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության հիմնադրամի ներսում կամ դրա սահմաններից դուրս ցանկացած անձի, ով նրանք գիտեն կամ պետք է իմանային, որ Հիմնադրամի կողմից լիազորված չէ ստանալու նման տեղեկատվություն:
- Օգտագործել կամ թույլատրել օգտագործել չիրապարակված և/կամ գաղտնի տեղեկատվությունը, որը հայտնի է իրենց Հիմնադրամում իրենց պաշտոնական դիրքից՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն կամ Հիմնադրամի շահերին հակասող որևէ շահի համար:
- Վերոնշյալ պարտավորությունները կատարելիս, որոնք շարունակվում են Հիմնադրամից հեռանալուց հետո, անձնակազմի անդամները պետք է պահպանեն Հիմնադրամի կողմից սահմանված կանոններն ու ընթացակարգերը՝ չիրապարակված և/կամ գաղտնի տեղեկատվությունը պաշտպանելու համար:
- Հրապարակումներ և հրապարակախոսություն
- Բացառությամբ իրենց ծառայողական պարտականությունների կատարման կամ հստակ թույլտվությամբ, անձնակազմի անդամներն իրենց նշանակման կամ ծառայության ընթացքում չեն կարող.

 - i. Հրատարակել, աջակցել Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության հիմնադրամի կամ ազգային քաղաքական հարցերի վերաբերյալ ցանկացած գրքի, գրքույկի, հոդվածի, նամակի կամ այլ փաստաթղթի հրապարակմանը
 - ii. Ներկայացնել ցանկացած ելույթ կամ հեռարձակում, հեռարձակել ռադիոյի, հեռուստատեսության կամ այլ էլեկտրոնային լրատվամիջոցների միջոցով կամ անցկացնել մամուլի ասուլիսներ կամ տրամադրել մամուլի հարցազրույցներ քաղաքականության, գործունեության կամ նման այլ հարցերի վերաբերյալ.
 - iii. Խոսել Հիմնադրամի անունից կամ նշել նրա քաղաքականությունը որևէ սեմինարի կամ համաժողովի մասնակցության ժամանակ:

դ) Լիազորում

Վերը նշված լիազորությունները տրվում են Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության հիմնադրամի տնօրենի կողմից:

4.6 Քաղաքական և արտաքին գործունեությունը և շահերը

4.7 Անձնակազմի անդամները կարող են օգտվել իրենց քաղաքական իրավունքներից, սակայն պետք է ձեռնպահ մնան ակտիվ քաղաքական գործունեության մեջ ներգրավվելուց, որը կարող է խանգարել կամ հակասել նրանց պարտականություններին կամ որպես աշխատակազմի անդամ նրանց կարգավիճակին: Անձնակազմի անդամները չպետք է զբաղեցնեն պետական պաշտոններ կամ նշանակումներ, որոնք, Հիմնադրամի կարծիքով, անհամատեղելի են իրենց պաշտոնական պարտականությունների պատշաճ կատարման հետ, և պետք է ստանան Տնօրենի նախնական հավանությունը ցանկացած նման պաշտոնի կամ նշանակման վերաբերյալ: Քաղաքական բնույթի որևէ պետական պաշտոնում նշանակում ընդունելու կամ նման պաշտոնի համար

թեկնածություն ընդունելու դեպքում, աշխատակիցները պետք է անմիջապես հրաժարվեն Հիմնադրամում ունեցած իրենց պաշտոնից: Գործարար կապեր և մասնավոր գործունեություն:

ա) Մասնավոր գործունեություն

- i. Բացառությամբ Տնօրենի կողմից նախնական համաձայնեցման, անձնակազմի անդամները չպետք է զբաղվեն մասնավոր աշխատանքով, ունենան կամ շահագործեն որևէ ձեռնարկություն, որը Հիմնադրամի կարծիքով, անհամատեղելի է նրանց ծառայողական պարտականությունների պատշաճ կատարման հետ: Ավելին, անձնակազմի անդամները չպետք է լինեն որպես որևէ կազմակերպության տնօրեն, սպա կամ գործընկեր, բացառությամբ Հիմնադրամի լիազորված ներկայացուցչից կամ Տնօրենի նախնական հաստատումից: Նման նախնական հաստատում չի պահանջվի որպես բարեգործական, սոցիալական կամ կրոնական կազմակերպության տնօրեն կամ պաշտոնյա կատարած ծառայությունների համար:

1. Հիմնադրամի տարածքում առևտրային գործունեություն. Առանց վերը նշվածի սահմանափակման, անձնակազմի անդամները և/կամ նրանց անմիջական ընտանիքի անդամը Հիմնադրամի տարածքում չպետք է զբաղվի մասնավոր առևտրային գործունեությամբ, ինչպիսիք են արտարժույթի առևտրային գործարքները, ապրանքների առևտուրը, անշարժ գույքի միջնորդությունը, դրամական վարկավորումը կամ ավտոմեքենաների վարձույթն ու միջնորդությունը:

բ) Հեռանկարային զբաղվածություն

Աշխատակազմի անդամները, ովքեր փնտրում են, բանակցում կամ ունեն պայմանավորվածություն ապագա այլ աշխատանքի վերաբերյալ, չպետք է որևէ պատասխանատվություն ունենան Հիմնադրամում այնպիսի գործարքի առնչությամբ, որում ապագա գործատուն ունի կամ կարող է ունենալ նախորդ պարբերությունում նշված տեսակի շահեր:

գ) Հետագա զբաղվածություն

Բացառությամբ Տնօրենի լիազորության, Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության հիմնադրամի նախկին աշխատակիցը չի կարող Հիմնադրամում աշխատանքը դադարեցնելուց հետո երկու տարվա ընթացքում ծառայություններ մատուցել որևէ այլ կազմակերպության կամ անձի ցանկացած հարցի վերաբերյալ, բացառությամբ կառավարության կամ պետական գործակալության, որում Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության հիմնադրամը շահագրգռված է կամ որի կողմ է Հիմնադրամը, և որին որպես աշխատակից անձամբ և էապես մասնակցել է Հիմնադրամում աշխատելու ընթացքում:

4.8 Ֆինանսական շահեր, ներդրումներ և առևտրային գործունեություն

ա) Հիմնադրամի ֆինանսավորման շահառուի տոկոսների պահպանում կամ գնում

i. Բացառությամբ ստորև ներկայացված (iii) ենթաբաժնում նախատեսված դեպքերի, աշխատակիցները կամ նրանց անմիջական ընտանիքի անդամները չպետք է ներդրումներ կատարեն հետևյալում.

- 7.3 «R2E2 հիմնադրամի աշխատակազմը և հարակից անձինք» - աշխատակազմի անդամները, խորհրդատուները և հարակից այլ անձինք պատասխանատու են՝
 - 7.3.1 Համապատասխանություն R2E2 հիմնադրամի ՓԼԱՖ դեմ պայքարի քաղաքականությանը, ընթացակարգերին և վերահսկողությանը;
 - 7.3.2 ՓԼԱՖ դեմ պայքարի համապատասխանությունը կառավարելու համար R2E2 հիմնադրամի ընթացակարգերին ծանոթանալն ու դրանց համապատասխան գործելը; և
 - 7.3.3 Առանց անհարկի ուշացման Վերստուգողին զեկուցել ՓԼԱՖ գործունեության վերաբերյալ որևէ կասկածի (կամ իրական դեպքերի) կամ «կարմիր դրոշների» մասին:

VIII. Իրականացնող կազմակերպությունների ուսումնասիրություն և «Իմացիր քո հաճախորդին» մոտեցում

- 8.1 Համաձայն վերոնշյալ 6.2 (ա) և 6.2 (բ) կետերի, R2E2 հիմնադրամը պետք է իրականացնի «Ճանաչիր քո հաճախորդին» միջոցառումներ, որոնք որոշվում են ռիսկի վրա հիմնված մոտեցման համաձայն՝ հաշվի առնելով դրա տեսակը, գործընկեր կազմակերպության և ենթակապալառուի հետ հարաբերությունների շրջանակը, ներգրավման եղանակները, և պետք է բացահայտեն և ստուգեն գործընկեր կազմակերպությունների և ենթակապալառուների (ներառյալ նրանց իրական սեփականատերերի) ինքնությունը: Այնուհետև, R2E2 հիմնադրամը պետք է ողջամիտ միջոցներ ձեռնարկի՝ պատշաճ կերպով գնահատելու նպատակը, տնտեսական հիմնավորումը և ՓԼԱՖ դեմ պայքարի և հարակից ամբողջականության ասպեկտները գործընկեր կազմակերպությունների և ենթակապալառուների (ներառյալ իրական սեփականատերերը)՝ խուսափելու ՓԼԱՖ նպատակների համար կառուցված հարաբերություններում ներգրավվելուց;
- 8.2 Համաձայն 6.1 կետի պահանջների՝ R2E2 հիմնադրամը պետք է գնահատի ՓԼԱՖ ռիսկերը հնարավոր կամ գոյություն ունեցող հարաբերություններում՝ «Ճանաչիր քո հաճախորդին հարցաթերթիկի» միջոցով;

8.3 Ռիսկերի գնահատումներ իրականացնելիս R2E2 հիմնադրամը պետք է սահմանի ՓԼԱՖ դեմ պայքարի ուղեցույց՝ օգնելու որոշել պոտենցիալ կամ գործող գործընկեր կազմակերպության և ենթակապալառուի կողմից բխող ռիսկի մակարդակը՝ հաշվի առնելով այն անձանց կամ կազմակերպությունների տեսակները, որոնք կարող են ներկայացնել բարձրացված ՓԼԱՖ ռիսկերը FATF-ի կողմից սահմանված միջազգային չափանիշներին համապատասխան;

Դա ներառում է բայց չի սահմանափակվում հետևյալով՝

(ա) Քաղաքականորեն փոխկապակցված անձինք (ՔՓԱ), ներառյալ նրանց անմիջական ընտանիքի անդամները կամ մերձավոր գործընկերները, կամ ՔՓԱ-ի հետ կապված կազմակերպությունները;

(բ) Ֆինանսական հաստատություններ, որոնք տրամադրում են թղթակցային բանկային կամ փողի կամ արժեքի փոխանցման ծառայություններ;

(գ) Նշանակված ոչ ֆինանսական ձեռնարկություններ և մասնագիտություններ;

(դ) Ներկայացնող բաժնետոմսեր թողարկող կամ անվանական բաժնետերերի կամ տնօրենների հետ.

(ե) սեփականության անհարկի բարդ կառուցվածք ունեցող սուբյեկտներ; և

(է) ոչ առևտրային կազմակերպություններ (ՈԱԿ):

8.4 R2E2 հիմնադրամը պետք է իրականացնի «Ճանաչիր քո գործընկերոջը» ընթացակարգը՝ պոտենցիալ կամ գոյություն ունեցող գործընկեր կազմակերպության և ենթակապալառուի հետ ցանկացած հարաբերություններ հաստատելիս: Այդ միջոցառումները պետք է ներառեն գործընկեր կազմակերպության և ենթակապալառուի ամբողջական ինքնության նույնականացումն ու ստուգումը, ինչպես նաև այդ տեղեկատվության իսկության հավաստումը;

8.5 Հետևելով ռիսկի վրա հիմնված մոտեցմանը, R2E2 հիմնադրամը կարող է կիրառել ավելի խիստ կամ ավելի կոնկրետ միջոցներ՝ կապված պոտենցիալ կամ գոյություն ունեցող գործընկեր կազմակերպությունների և ենթակապալառուների հետ, որոնք գնահատվում են 8.3 (ա) մինչև (գ) կետերում նշված կատեգորիաներից որևէ մեկում: Մասնավորապես, գործընկեր կազմակերպությունների և ենթակապալառուների իրական սեփականատերը(ները) պետք է նույնականացվեն և ստուգվեն:

8.6 «Ճանաչիր քո գործընկերոջը» ընթացակարգով ստացված տեղեկատվությունը և նույնականացման ապացույցները պետք է ձեռք բերվեն ուղղակիորեն պոտենցիալ կամ գոյություն ունեցող գործընկեր կազմակերպությունից կամ ենթակապալառուից կամ անկախ և վստահելի աղբյուրներից, ինչպիսիք են՝ համապատասխան կառավարության կամ դրա հետ կապված աղբյուրների կողմից պահպանվող հանրային գրառումները, հնարավոր կամ գոյություն ունեցող գործընկերոջ պաշտոնական կայքը, կամ, բացառիկ դեպքերում, R2E2 անձնակազմի կամ լիազորված երրորդ անձանց կողմից տեղում այցելություններ:

- 8.7 R2E2 հիմնադրամը պետք է ապահովի, որ բոլոր պոտենցիալ և գոյություն ունեցող գործընկեր կազմակերպությունները և ենթակապալառուները ստուգվեն՝ համաձայն սույն քաղաքականության 6.2 (ա) և 6.2 (բ) կետերի:
- 8.8 R2E2 հիմնադրամը պետք է ապահովի, որ «ճանաչիր քո գործընկերոջը» ընթացակարգը ավարտված լինի մինչև գործընկեր կազմակերպության կամ ենթակապալառուի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ մտնելը: Ոչ մի դեպքում չպետք է վճարումներ կատարվեն մինչև «ճանաչիր քո գործընկերոջը» ընթացակարգի ավարտը և արդյունքների ամփոփումը:
- 8.9 R2E2 հիմնադրամը պետք է ապահովի ՓԼԱՖ դեմ պայքարի շարունակական մոնիտորինգ այն բանից հետո, երբ գործընկերը կամ ենթակապալառուն դիտարկվեն ռիսկերի վրա հիմնված մոտեցմամբ: Առնվազն նման միջոցները պետք է ներառեն «ճանաչիր քո գործընկերոջը» ընթացակարգի տվյալների արդիականության ապահովումը և մոնիտորինգը, որ գործընկեր կազմակերպության կամ ենթակապալառուի կողմից իրականացվող R2E2 հիմնադրամի հետ կապված գործողությունները համապատասխանում են պայմանագրային համաձայնեցված պայմաններին, և որ R2E2 միջոցները չեն չարաշահվում ՓԼԱՖ քաղաքականության տեսանկյունից;
- 8.10 Համաձայն վերոնշյալ 8.11 և 3.2 հոդվածների, որոնք սահմանում են, որ քաղաքականությունը պետք է համապատասխանի Միավորված ազգերի կազմակերպության համապատասխան կոնվենցիաներին և FATF-ի առաջարկություններին, R2E2 հիմնադրամը պետք է ձեռնպահ մնա ներգրավվելուց գործարար հարաբերությունների մեջ այն կազմակերպությունների հետ որոնք՝
- (ա) չլիցենզավորված բանկեր կամ դրամական միջոցների փոխանցման ծառայություններ, չկարգավորված մատակարարներ կամ գործակալներ;
 - (բ) հարաբերությունների մեջ է (գործ ունի կամ ծառայություններ է մատուցում)
 - (ա) կետում նշված կազմակերպությունների հետ կամ դրանց գործակալների հետ;
 - (դ) դրամական միջոցների տրամադրում՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն, կանխիկ սուրհանդակների միջոցով՝ R2E2 հիմնադրամի հետ կապված գործունեության իրականացման նպատակով;
 - ե) Ֆինանսական հաստատություններ, որոնք թողարկում են Բաժնետոմսեր; և
 - զ) Ֆինանսական հաստատություններ, որոնք իրենց հաճախորդների համար պահում են անանուն հաշիվներ կամ կեղծ անուններով հաշիվներ;
- 8.11 Բացի այդ, R2E2 հիմնադրամը ոչ մի դեպքում թույլ չի տա հատկացումներ անանուն, համարակալված հաշիվներին կամ անձնագրային գրքույկներին կամ երրորդ կողմի հաշիվներին;
- 8.12 Համաձայն վերոնշյալ 8.11 և 8.12 կետերի՝ անընդունելի հարաբերությունների ցանկը կարող է ընդլայնվել կամ փոփոխվել՝ փոփոխվող միջավայրին համապատասխան;

IX. Ֆինանսական գործարքների դիտարկում

9.1 Համաձայն սույն քաղաքականության 6.2 (բ)(i) կետի, R2E2 հիմնադրամը գործընթացներ է սահմանում ֆինանսական գործարքների մոնիտորինգի և կասկածելի գործողությունների մասին հաղորդումների ներկայացնելու համար: Առնվազն R2E2 հիմնադրամը ձեռնարկում է մի շարք տեղեկացված միջոցառումներ՝ հետևելով ռիսկի վրա հիմնված մոտեցմանը, ներառյալ, բայց չսահմանափակվելով հետևյալով;

(ա) Ֆինանսական հաստատությունների կամ ֆինանսական միջնորդների ընտրության չափանիշների սահմանում իրականացնող կազմակերպություններին և ենթակապալառուներին, որոնց միջոցով R2E2 միջոցները հատկացվում են վերջնական ստացողներին կամ շահառուներին: Նման չափանիշները ներառում են ֆինանսական գործարքների մոնիտորինգ և հաշվետվություններ;

(բ) Չափանիշներ սահմանել և պահանջել, թե որքանով են իրականացնող կազմակերպությունները և ենթակապալառուները պարբերաբար հաշվետվություններ ներկայացնում R2E2 հիմնադրամին իրենց հիմքում ընկած ֆինանսական գործառնությունների վերաբերյալ; և

(գ) Չեկուցված ֆինանսական գործարքները վերլուծելու համար գործիքների մշակում, գործիքների արդյունավետության շարունակական վերանայում և, անհրաժեշտության դեպքում, նախաձեռնում ցանկացած բարելավում կամ փոփոխություն;

X. Կարմիր դրոշակների, կասկածների և ՓԼԱՖ կասկածների մասին հաղորդման ներկայացում

10.1 Ներառված անձինք պետք է հաղորդում ներկայացնեն ցանկացած կասկածելի գործունեության, «կարմիր դրոշի» (կասկածելի գործունեության ցուցիչ) կամ ՓԼԱՖ գործունեության մասին, որը նրանք հայտնաբերում կամ կասկածում են իրենց պարտականությունների կատարման ընթացքում: Նման հաշվետվությունները պետք է կազմվեն և ուսումնասիրվեն R2E2 հիմնադրամի քաղաքականության և ընթացակարգերի համաձայն: Հաղորդում չներկայացնելը կարող է արդյունք հանդիսանալ R2E2 հիմնադրամի հեղինակության լուրջ վնասների կամ իրավական պատասխանատվության;

10.2 Վերստուգողը պետք է ապահովի, որ «կարմիր դրոշների», կասկածելի գործողությունների և կասկածելի ՓԼԱՖ գործունեության մասին հաղորդումները գրանցվեն, ուսումնասիրվեն և հետաքննվեն արագ և պրոֆեսիոնալ կերպով:

10.3 Վերստուգողը պետք է ծանուցի R2E2 հիմնադրամի տնօրենին, կասկածելի գործողության կամ կասկածելի ՓԼԱՖ գործարքի վերաբերյալ, երբ այն հիմնավորվել է Վերստուգողի հետաքննության արդյունքներով: R2E2 հիմնադրամը պետք է որոշի բացահայտել այդ կասկածելի գործունեությունը կամ կասկածելի ՓԼԱՖ գործարքները ՀՀ Կենտրոնական բանկին: Տնօրենը կարող է լիազորել Վերստուգողին բացահայտում անել R2E2 հիմնադրամի անունից: Կասկածելի գործունեությունը և ՓԼԱՖ ենթադրյալ գործարքները բացահայտելու

կամ չբացահայտելու մասին որոշումները պետք է հստակ արձանագրվեն և զեկուցվեն Հոգաբարձուների խորհրդին:

- 10.4 Համաձայն R2E2 հիմնադրամի քաղաքականությունների, կանոնների և ընթացակարգերի, R2E2 հիմնադրամը կարող է կարգապահական կամ այլ պատժիչ միջոցներ ձեռնարկել իր անձնակազմի դեմ, ով, իմանալով կասկածելի գործողությունների մասին, չի կարողանում առանց ողջամիտ պատճառաբանության հաղորդում ներկայացնել, կամ արգելափակել կամ փորձել է արգելափակել մեկ այն աշխատակցի կողմից նման հաղորդման ներկայացումը;
- 10.5 Ոչ մի դեպքում R2E2 հիմնադրամի անձնակազմը չպետք է զգուշացումներ անի կասկածյալներին: Դրա իրականացումը կարող է վնասել Վերստուգողի կողմից առկա կամ հնարավոր հետաքննությանը և կարող է ենթարկվել շտկման գործողությունների՝ համաձայն R2E2 հիմնադրամի էթիկայի և շահերի բախման քաղաքականության;

XI. Գործընկերության դադարեցում

- 11.1 Սույն Քաղաքականության 6-րդ բաժնի (Հիմնական դրույթներ) պահանջն է, որպեսզի R2E2 հիմնադրամը հարաբերությունների մեջ չմտնի այն գործընկեր կազմակերպությունների կամ ենթակապալառուների հետ, որոնք ներգրավված են ՓԼԱՖ մեջ:

XII. Կարողությունների զարգացում

- 12.1 R2E2 հիմնադրամը ապահովում է, որ ներառված ֆիզիկական անձինք ստանան ՓԼԱՖ դեմ պայքարի համարժեք ուսուցում, որի նպատակն է ամրապնդել նրանց գիտելիքներն ու իրազեկությունը հետևյալ առարկայի վերաբերյալ՝
- ա) ՓԼԱՖ դեմ պայքարի քաղաքականության, ընթացակարգերի և համապատասխան պարտավորությունները, պահանջները, կանոնները և ընթացակարգերը, ինչպես նաև անհամապատասխանության հնարավոր հետևանքները; և
 - բ) ՓԼԱՖ-ի, «կարմիր դրոշների», կասկածելի գործողությունների և ամբողջականության հետ կապված այլ ռիսկերի կամ խախտումների բացահայտման և զեկուցման ընթացակարգերի համար օգտակար տեղեկատվություն և մեթոդներ:
- 12.2 ՓԼԱՖ դեմ պայքարի ուսուցումն ապահովելու համար R2E2 հիմնադրամը պետք է մշակի և մշակի ՓԼԱՖ դեմ պայքարի ուսուցման ուղեցույցներ: Նման ուղեցույցները պետք է անդրադառնան առնվազն վերապատրաստման հաճախականությանը, բովանդակությանը, մեթոդներին և գիտելիքների փորձարկմանը և ուսուցումը չանցնելու կամ ավարտին հասցնելու հետևանքներին և պետք է մշակվեն R2E2 հիմնադրամի անձնակազմի համար՝ հաշվի առնելով R2E2 հիմնադրամում նրանց դիրքը կամ դերը;
- 12.3 Համաձայն սույն քաղաքականության 3.4-րդ կետի, R2E2 հիմնադրամը պետք է քայլեր ձեռնարկի իր պոտենցիալ և գործող գործընկեր կազմակերպություններին և ենթակապալառուներին խրախուսելու համար, որպեսզի վերջիններս որդեգրեն քաղաքականություն և ընթացակարգեր, որոնք համահունչ են ՓԼԱՖ դեմ

պայքարի քաղաքականության սկզբունքներին, ինչպես նաև աջակցություն ցուցաբերի գոյություն ունեցող գործընկեր կազմակերպություններին և ենթակապալառուներին ՓԼԱՖ ռիսկերը կանխելու, հայտնաբերելու, կառավարելու և մեղմելու, ինչպես նաև «կարմիր դրոշների», կասկածելի գործողությունների և կասկածելի ՓԼԱՖ-ի հետաքննություններ իրականացնելու համար: Այդ նպատակով R2E2 հիմնադրամը կկազմակերպի ուսուցում և կարողությունների զարգացման աջակցություն կամ մասնագիտացված ուսուցում այդպիսի կազմակերպություններին և ենթակապալառուներին հետևյալ դեպքերում՝

ա) երբ պոտենցիալ կամ գոյություն ունեցող գործընկեր կազմակերպությունը կամ ենթակապալառուները հատուկ խնդրել են կարողությունների զարգացման գործում աջակցություն՝ հնարավորություն տալու արդյունավետորեն կանխել, հայտնաբերել, կառավարել և մեղմել ՓԼԱՖ ռիսկերը, ինչպես նաև հետաքննել «կարմիր դրոշները», կասկածելի գործողությունները և կասկածելի ՓԼԱՖ գործարքները;

բ) եթե R2E2 հիմնադրամը հայտնաբերել է, որ նման պոտենցիալ կամ գոյություն ունեցող գործընկեր կազմակերպությունը կամ ենթակապալառուները չունեն բավարար կարողություններ կամ գիտելիքներ՝ ՓԼԱՖ-ն կանխելու, հայտնաբերելու, կառավարելու և մեղմելու համար; և

գ) եթե Վերստուգողը պարզել է, որ իր նախաձեռնողական ամբողջականության վերանայումների և գործընկեր կազմակերպությունների կամ ենթակապալառուների հետ այլ ներգրավվածությունների միջոցով չունի բավարար կարողություններ կամ գիտելիքներ՝ կանխելու և հայտնաբերելու ՓԼԱՖ և այլ արգելված գործելաոճի ռիսկերը, կամ ստանալու, մշակելու կամ հետաքննելու վերաբերյալ հաղորդումները;

12.4 Վերոնշյալ 12.3 կետում նշված ուսուցման և կարողությունների զարգացման աջակցությունը պետք է տարբերակված լինի՝ ելնելով պոտենցիալ կամ գործընկեր կազմակերպությունների կամ ենթակապալառուների տարբեր կարիքներից և կարողություններից և կարող է տեղեկացված լինել ՓԼԱՖ դեմ պայքարի կարողությունների գնահատման միջոցով: Աջակցության և վերապատրաստման ոլորտները ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝

12.5 Քաղաքականության վերաբերյալ խորհրդատվություն - Աջակցություն կազմակերպության քաղաքականության, ընթացակարգերի, և կառավարման մեխանիզմների մշակմանը՝ կապված արգելված գործելակերպի հետ, ներառյալ ՓԼԱՖ դեմ պայքարը, ազդարարումը և վկաների պաշտպանությունը և հետաքննությունները;

12.6 Տեխնիկական ուսուցում - ՓԼԱՖ դեմ պայքարի համապատասխանության ծրագրի իրականացման արդյունավետ ուղիների վերաբերյալ, ներառյալ «ճանաչիր քո հաճախորդին», ռիսկերի գնահատում և շարունակական մոնիտորինգ; և

12.7 Փորձի փոխանակում - տեղեկատվության տրամադրում, ներառյալ տվյալների բազաներ և համակարգեր՝ օգնելու կազմակերպություններին բարձրացնել իրենց կարողությունները ռիսկերի գնահատման և հայտնաբերման հարցում;

XIII. Փաստաթղթերի պահպանում

13.1 Համաձայն սույն քաղաքականության 6.2 (ե) հոդվածի, R2E2 հիմնադրամը պետք է ապահովի ՓԼԱՖ դեմ պայքարի նպատակների համար գրանցումների պահպանման պարտադիր և նվազագույն պահանջներ, ներառյալ՝ ցույց տալու, որ պատշաճ ջանասիրություն է իրականացվել ՓԼԱՖ կանխարգելման համար և ապահովելու, որ բավարար տեղեկատվությունը կամ փաստաթղթերը կարող են տրամադրվել, երբ իրավասու մարմինները պահանջեն ՓԼԱՖ դեմ պայքարի ցանկացած հետաքննության ընթացքում:

13.2 Գրանցումների պահպանման վերաբերյալ ուղեցույցներ պետք է սահմանվեն հետևյալ խնդիրների լուծման համար.

ա) գրառումների պահպանման տևողությունը և ժամկետները;

բ) Գրառումների պահպանում և գրառումների ներքին և արտաքին հասանելիություն;

գ) գրառումների օգտագործումը հետաքննության նպատակով;

դ) գրառումների պահպանման պայմանների համապատասխանությունը;

ե) գրառումների պահպանման գաղտնիությունը և անվտանգությունը; և

զ) գրառումների շրջանակը և բովանդակությունը;

XIV. Տվյալների պաշտպանություն և գաղտնիություն

14.1 «Ճանաչիր քո հաճախորդին» ուսումնասիրության կամ կասկածելի գործողությունների մոնիտորինգի ընթացքում ձեռք բերված ցանկացած տվյալ, տեղեկատվություն և փաստաթուղթ, ֆիզիկական կամ էլեկտրոնային ձևաչափով, պետք է պաշտպանված և գաղտնի պահվի՝ համաձայն R2E2 հիմնադրամի քաղաքականության և ընթացակարգերը.

XV. Մեկնաբանության իրավունք

15.1 R2E2 հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն ունի այս քաղաքականությունների մեկնաբանման վերջնական իրավունքը: Այնուամենայնիվ, գործառնական նպատակներով, առաջին ատյանի, խորհուրդն այս պատասխանատվությունը վերապահում է Վերստուգողին:

XVI. Փոփոխությունների կատարում

16.1 Սույն փաստաթուղթը պետք է վերանայվի երկու տարին մեկ կամ պահանջվող ընդմիջումներով, որպեսզի արտացոլի միջազգային լավագույն փորձը, որը համահունչ է FATF-ի մշակվող առաջարկություններին կամ այլ կերպ պահանջվում է Հոգաբարձուների խորհրդի կամ առաջարկվում է Վերստուգողի կողմից: Վերանայումները պետք է իրականացվեն Վերստուգողի կողմից՝ համագործակցելով R2E2 հիմնադրամի աշխատակազմի հետ:

XVII. Փաստաթղթի ուժի մեջ մտնելը

17.1 Սույն քաղաքականությունը ուժի մեջ է մտնում R2E2 հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդի կողմից հաստատումից հետո:

ՀԱՎԵԼՎԱԾ X – Սեռական շահագործման բացառման քաղաքականություն

I. Ներածություն

1. R2E2 հիմնադրամը, իր գործունեության շրջանակներում գրոյական հանդուրժողականություն է դրսևորում Սեռական շահագործման, սեռական բռնության և սեռական ոտնձգության (ՍՇԲՈ) բոլոր ձևերի հանդեպ: ՍՇԲՈ-ն ոտնահարում է մարդկային արժանապատվությունը և հանդիսանում անընդունելի վարքագիծ: ՍՇԲՈ-ն հիմնված է անհավասար հարաբերությունների և ուժային դինամիկայի վրա, որոնք հանգեցնում են խտրականության և արտոնությունների մշակույթին: Այն ստեղծում է թշնամական միջանձնային հարաբերություններ և անառողջ աշխատանքային միջավայր, որոնք սահմանափակում են ազդակիր անձանց բարգավաճման և R2E2 հիմնադրամի իր նպատակներին հասնելու կարողությունները:
2. R2E2 հիմնադրամը ճանաչում է իր գործունեության ընթացքում ՍՇԲՈ-ն արդյունավետորեն կանխելու և արձագանքելու հրամայականը, ՍՇԲՈ-ից տուժածներին և հատկապես խոցելի դիրքերում և իրավիճակներում գտնվող անձանց պաշտպանության կարևորությունը: Այս մոտեցումները կարևոր են R2E2 հիմնադրամի գործունեության տիրույթում ամբողջականությունն ու հաշվետվողականությունն ամրապնդելու համար:
3. Այս քաղաքականությունը հանդիսանում է R2E2 հիմնադրամի Արգելված գործողությունների մասին քաղաքականությունների փաթեթի մի մաս (ներառում է նաև ազդարարների և վկաների պաշտպանության քաղաքականությունը, գենդերային քաղաքականությունը, մարդկային ռեսուրսների վերաբերյալ Վարչական ուղեցույցը (հատկապես ոտնձգությունների վերաբերյալ բաժինը): Այս քաղաքականություններն ապահովում են փոխլրացում և աշխատում են միասին՝ հասնելու R2E2 հիմնադրամի ՍՇԲՈ-ի գրոյական հանդուրժողականության ընդհանուր նպատակին:
4. R2E2 հիմնադրամի կողմից ֆինանսավորվող բոլոր գործողություններում ՍՇԲՈ ռիսկի նվազեցումը (ինչպես նկարագրված է ԲՄ քաղաքականության ներքո) կլուծվի ԲՄ քաղաքականության համապատասխան դրույթների միջոցով:
5. R2E2-ը կաջակցի այն կազմակերպություններին, որոնց հետ նա համագործակցում է՝ մշակելու և իրականացնելու քաղաքականություններ և մեխանիզմներ, որոնք ուղղված են սեռական շահագործման, սեռական չարաշահման և սեռական ոտնձգությունների բացառմանը:

II. Շրջանակ

6. Սեռական շահագործումից, սեռական չարաշահումից և սեռական ոտնձգություններից կանխարգելման և պաշտպանության քաղաքականությունը (քաղաքականությունը) սահմանում է R2E2 հիմնադրամի գրոյական հանդուրժողականությունը ՍՇԲՈ-ի նկատմամբ: Այն հստակ պարտավորություններ է սահմանում R2E2 հիմնադրամի աշխատակազմի ներկայացուցիչների համար՝ կանխելու և արձագանքելու ՍՇԲՈ-ին և զերծ մնալու ՍՇԲՈ հանդեպ ներողամտությունից, խրախուսելուց,

հանդուրժողականությունից և դրան մասնակցելուց: Այս քաղաքականության շրջանակը վերաբերում է ներառվող անձանց:

7. Սույն քաղաքականությունը կապված է ԲՄ քաղաքականության հետ, և R2E2 հիմնադրամի կողմից ֆինանսավորվող բոլոր գործողություններում ՍՇԲՈ ռիսկի նվազեցման պահանջները սահմանված են ԲՄ քաղաքականության մեջ:

III. Սահմանումներ

8. Սույն քաղաքականության ենթատեքստում հետևյալ սահմանումներն ունեն ստորև ներկայացված նշանակությունը՝

- **«Խորհուրդ»** - R2E2 Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդ;
- **«Ներառվող անձինք»** - R2E2 Հիմնադրամի կամայական մակարդակում աշխատող անձինք են, ներառյալ (բայց չսահմանափակվելով) Տնօրենը, ղեկավար և այլ անձնակազմը, ինչպես նաև այն անձինք, ովքեր պայմանագրային առնչություն ունեն Հիմնադրամի հետ;
- **«Կեղծ կամ կանխամտածված հաղորդում»** - ոչ ճշգրիտ կամ ապակողմնորոշիչ հաղորդում, որը արվել է անխոհեմաբար, գիտակցաբար կամ դիտավորությանբ՝ անձին կամ կազմակերպությանը անհարկի առավելություն ստանալու կամ վնաս պատճառելու նպատակով:
- **«R2E2 հիմնադրամին առնչվող գործողություն»** նշանակում է ցանկացած գործողություն, որը ֆինանսավորվում, կառավարվում կամ աջակցություն է ստանում R2E2 հիմնադրամի կողմից (իր, դոնորային կամ պետ բյուջեի միջոցների հաշվին) կամ ցանկացած գործողություն, որը նյութական ազդեցություն ունի կամ կարող է ունենալ R2E2 հիմնադրամի վրա կամ այլ կերպով վերաբերում է հիմնադրամին;
- **«ՍՇԲՈ»** - Սեռական շահագործում, բռնության և ոտնձգության;
- **«ՍՇԲՈ Ստուգում»** նշանակում է աշխատանքի ընդունման ժամանակ իրականացվող գործառնություն, որի ընթացքում աշխատանքի դիմորդներից պահանջվում է ներկայացնել ՍՇԲՈ-ի հայտարարագիր, և որի միջոցով Հայտարարագրում պարունակվող տեղեկատվությունը հնարավորինս ստուգվում է հարցումների/հետազոտությունների միջոցով:
- **«ՍՇԲՈ Հայտարարագիր»**-ը ստորագրված հայտարարագիր, որը բացահայտում է անձի սեռական շահագործման, սեռական չարաշահման կամ սեռական ոտնձգությունների նախապատմությունը՝ կապված օրինականորեն բացահայտվող քրեական վարքագծի կամ գործող կամ նախկին գործատուի կողմից սահմանված կարգապահական պատժամիջոցների հետ:
- **«Սեռական բռնություն»** - սեռական բնույթի փաստացի կամ սպառնացող ֆիզիկական ներխուժում՝ ուժի միջոցով, կամ անհավասար կամ հարկադրանքի պայմաններում;
- **«Սեռական շահագործում»** - խոցելիության, ուժի կամ վստահության դիրքի ցանկացած փաստացի չարաշահում կամ դրա փորձ՝ սեռական նպատակներով, ներառյալ, բայց չսահմանափակվելով ուրիշի սեռական շահագործումից դրամական, սոցիալական կամ քաղաքական շահույթ ստանալու նպատակով:

- **«Սեռական ոտնձգություն»** - ներառում է անցանկալի սեռական վարվելակերպ, սեռական բարեհաճության խնդրանքները և սեռական բնույթի այլ բանավոր կամ ֆիզիկական վարքագիծ, որը խանգարում է աշխատանքին, կամ աշխատանքի պայման է դառնում, կամ ստեղծում է վախեցնող, թշնամական կամ վիրավորական միջավայր;
- **«Տեղեկատվության ստուգում»** - աշխատանքի ընդունման գործընթացի այն մասը, որով ստուգումներ են կատարվում՝ ստուգելու աշխատանքի դիմողների կողմից իրենց կրթական, մասնագիտական և այլ նախադրյալների վերաբերյալ տեղեկությունների կամ հայտարարությունների ճշգրտությունն ու իսկությունը;
- **«Տուժող»** - այն անձն է, ով ենթարկվել է սեռական շահագործման, բռնության կամ ոտնձգության:

IV. Ուղղորդող սկզբունքներ

9. Ուղղորդող սկզբունքները խարսխված են ՄՇԲՈ քաղաքականության հիմնական արժեքների և հիմքերի վրա և համահունչ են R2E2 հիմնադրամի հիմնադիր փաստաթղթերի և ազգային քաղաքականության ու կանոնակարգերի նպատակների ու առաջնորդող սկզբունքների հետ:
10. R2E2 հիմնադրամը չի հանդուրժում սեռական շահագործման, սեռական բռնության կամ սեռական ոտնձգության որևէ ձև:
11. R2E2 հիմնադրամը և նրա ներառվող ֆիզիկական անձինք չպետք է համագործակցեն այն անձանց հետ, ովքեր ներում են, խրախուսում, մասնակցում կամ ներգրավված են ՄՇԲՈ-ում:
12. R2E2 հիմնադրամը պետք է ձեռնարկի բոլոր համապատասխան միջոցները՝ կանխելու, մեղմելու, հետաքննելու և շտկելու ՄՇԲՈ իրավիճակները՝ կապված R2E2 հիմնադրամի հետ կապված գործողություններում ներառված անձանց կողմից իրականացված գործողությունների հետ:
13. R2E2 հիմնադրամը պետք է ձեռնարկի բոլոր համապատասխան այնպիսի միջոցները փաստացի կամ ենթադրյալ տուժողներին պաշտպանելու համար, ինչպիսիք են՝ նրանց անանտևության, ֆիզիկական անվտանգություն ապահովում, ենթադրյալ հանցագործների մոտից հեռացում:

V. Ներառվող անձանց պարտավորությունները

5.1 Ներառվող անձանց պարտավորությունները

14. Ներառվող անձինք պետք է պահպանեն սույն Քաղաքականության առաջնորդող սկզբունքները և նպաստեն ՄՇԲՈ կանխարգելման միջավայրի ստեղծմանն ու պահպանմանը:
15. R2E2 հիմնադրամի հետ կապված գործողություններում ներառվող անձինք չպետք է ներեն, խրախուսեն, մասնակցեն կամ ներգրավվեն ՄՇԲՈ-ում: Մասնավորապես, նրանք չպետք է՝
 - օգտագործեն իրենց դիրքը սեռական շահագործում, սեռական չարաշահում կամ սեռական ոտնձգություն կատարելու համար ցանկացած անձի դեմ, ով համագործակցում է R2E2 հիմնադրամի հետ;

- սեռական գործունեությամբ զբաղվեն երեխաների հետ (ինչպես սահմանված է Միավորված ազգերի կազմակերպության Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 1-ին հոդվածում): Երեխայի տարիքի վերաբերյալ սխալ համոզմունքը վավեր իրավական պաշտպանություն չէ: Ցանկացած նման գործունեություն պետք է համարվի որպես սեռական շահագործում և/կամ սեռական բռնություն;

16. Հաշվի առնելով վրեժխնդրությունից պաշտպանվածության ապահովման անհրաժեշտությունը, ներառվող անձինք պարտավոր են հնարավորինս շուտ տեղեկացնել Վերստուգողին R2E2 հիմնադրամի հետ կապված գործողություններում ցանկացած կասկածելի ՍՇԲՈ դրսևորման մասին, ինչպես նաև համագործակցեն դրա հետ;

17. Հաշվի առնելով վրեժխնդրությունից պաշտպանվածության ապահովման անհրաժեշտությունը, R2E2 հիմնադրամի ցանկացած վերահսկող, կառավարիչ կամ պատասխանատու այլ անձ, ով ստանում է ՍՇԲՈ կասկածի մասին տեղեկատվություն, պարտավոր է անհապաղ փոխանցել այդպիսի տեղեկատվությունը Վերստուգողին:

VI. Կանխարգելում և ստուգում

6.1 Ներառվող անձինք

18. R2E2 հիմնադրամը, սույն քաղաքականության ընդունումից հետո որքան հնարավոր է շուտ, պետք է ապահովի իր գնումների, աշխատանքի ընդունման կամ այլ փոխգործակցային գործընթացներում ՍՇԲՈ ստուգումների գործընթացի ներդրումը;

19. ՍՇԲՈ ստուգումներ իրականացնելիս R2E2 հիմնադրամը պետք է ապահովի, որ անձնակազմը և արտաքին փորձագետները լրացնեն ՍՇԲՈ հայտարարագրերը մինչև որևէ աշխատանքային կամ փորձագիտական պայմանագիր կնքելու մասին առաջարկության ներկայացումը;

20. ՍՇԲՈ հայտարարագրի ներկայացումից հետո R2E2 հիմնադրամը պետք է ապահովի, որպեսզի իրականացվեն ՍՇԲՈ-ով տրամադրված համապատասխան տեղեկությունների ճշտությունը հավաստող ստուգումներ՝ հնարավորինս ստուգելու նպատակով թեկնածուի կողմից տրամադրված տեղեկատվության ճշգրտությունն ու իսկությունը:

21. ՍՇԲՈ հայտարարագրում ՍՇԲՈ որևէ գործողության վերաբերյալ տեղեկատվության չհրապարակումը և/կամ ոչ ճշգրիտ կամ թերի քացահայտումը պետք է դիտարկվի որպես ոչ պատշաճ վարքագիծ (աշխատակիցների դեպքում) կամ պայմանագրի խախտում (խորհրդատուների դեպքում): R2E2 հիմնադրամը իրավունք է վերապահում հետ կանչել աշխատանքի ընդունման կամ պայմանագրի կնքման վերաբերյալ ցանկացած առաջարկ կամ դադարեցնել որևէ պայմանագրային ներգրավվածություն, եթե պարզվի, որ դիմողը ներկայացրել է ՍՇԲՈ գործողությունների վերաբերյալ նախկինում կատարված քրեական կամ կարգապահական գրառումների վերաբերյալ կեղծ տեղեկություններ;

22. Ներառվող ֆիզիկական անձինք պարտավոր են R2E2 հիմնադրամին քացահայտել իրենց ինտիմ անձնական հարաբերությունները այլ ներառվող ֆիզիկական անձանց հետ հետևյալ հանգամանքներում՝

- երբ մարդկանց միջև գոյություն ունի վարչական ենթակայության հարաբերություններ, կամ
- երբ երկու անձ անհավասար դիրքեր ունեն R2E2 հիմնադրամում, և ողջամտորեն կարելի է ենթադրել, որ շահերի բախում կարող է գոյություն ունենալ (այսինքն, որ բարձր պաշտոնում գտնվող անձը կարող է իր ազդեցությունը գործադրել՝ անարդարացիորեն օգուտ կամ վնաս հասցնելու ենթակա անձին);

6.2 Տեղեկացվածության բարձրացում, հաղորդակցում և վերապատրաստում

23. R2E2-ի մարդկային ռեսուրսների կառավարման ստորաբաժանումը հնարավորինս շուտ պետք է պատրաստի սույն քաղաքականության իրականացման ապահովման համար գործնական ուղեցույցներ գործողությունների ծրագրի տեսքով՝ աջակցելու համար սույն քաղաքականության տարածմանը և իրականացմանը, ինչպես նաև R2E2 հիմնադրամում ՄՇԲՈ խնդրի և դրա հնարավոր հետևանքների մասին իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով: Այդ պլանը պետք է իր մեջ ներառի՝

- Սույն քաղաքականության հասանելիության ապահովումը R2E2 կայքի միջոցով;
- Քաղաքականության իրականացման ուղեցույցների մշակում գործողությունների պլանի, ուսուցման, ուղեցույցների և գործիքների, ինչպես նաև հաղորդակցման նյութերի տեսքով ներառվող անհատների համար՝ բարձրացնելու իրազեկվածությունը և աջակցելու այս քաղաքականության իրականացմանը: Նման վերապատրաստումները, գործիքները և ուղեցույցը կհարմարեցվեն թիրախային լսարանի կարիքներին և կազմակերպության համատեքստին.
- Հնարավորության սահմաններում իրազեկվածության բարձրացման և վերապատրաստման միջոցառումների իրականացում՝ ներառվող անհատների համար և/կամ դրանց հետ համագործակցությամբ ;
- ՄՇԲՈ համապատասխան պաշտպանական համակարգի ձևավորման նպատակով ուղեցույցների, ուսուցման դասընթացների և ընթացակարգերի մշակում R2E2 հիմնադրամի համապատասխան անձնակազմի համար, որը պատասխանատու է ՄՇԲՈ ռիսկերը գնահատելու և մեղմելու համար;
- Ապահովել, որ բոլոր ներառվող անձինք պարտադիր վերապատրաստում անցնեն՝ սույն քաղաքականության և համապատասխան գործառնական ընթացակարգերի համապատասխանությունը ապահովելու նպատակով;

VII. Հաշվետվայնություն և հետաքննություն

24. Ցանկացած անձ կամ կազմակերպություն կարող է Վերստուգողին տեղեկացնել ՄՇԲՈ փաստացի արարքի կամ դրա կասկածի մասին՝ ինչպես սահմանված է սույն Քաղաքականությամբ: R2E2 Հիմնադրամի հետ կապված գործողություններում ՄՇԲՈ կասկածելի արարքի վերաբերյալ տեղեկատվություն ունեցող անձինք, հատկապես, երբ այն վերաբերում է

ներառվող անձանց, պարտավոր են նման տեղեկատվությունը փոխանցել Վերստուգողին:

25. ՄՇԲՈ փաստացի արարքի կամ դրա կասկածի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է ներկայացվեն համապատասխան մարմնին, ինչպես սահմանված է R2E2 հիմնադրամի Ազդարարների և վկաների պաշտպանության քաղաքականության մեջ:

26. Համաձայն R2E2 հիմնադրամի Ազդարարների և վկաների պաշտպանության քաղաքականությանը նախատեսված ընթացակարգերի.

- R2E2 հիմնադրամի անձնակազմի և արտաքին փորձագետների կողմից փաստացի կամ կասկածելի ՄՇԲՈ արարքների մասին հաղորդագրությունները պետք է ներկայացվեն Վերստուգողին հետևյալ կոնտակտային եղանակներից որևէ մեկի միջոցով՝ պայմանով, որ կոնտակտային տվյալների հետ կապված ցանկացած փոփոխություն պետք է պատշաճ կերպով հաղորդվի և տարածվի.

Էլ փոստ՝ integrity@r2e2.am

Թեժ գիծ՝ + 374 10 588011

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Սայաթ Նովայի պողոտա, 29/1, R2E2 հիմնադրամի Վերստուգողին

27. ՄՇԲՈ փաստացի արարքների կամ դրանց մասին կասկածների վերաբերյալ հաղորդումներ ներկայացնող անձինք կամ կազմակերպությունները պետք է դա անեն բարեխղճորեն և, հնարավորության դեպքում, տրամադրեն իրենց մոտ առկա ցանկացած տեղեկատվություն կամ ապացույց, որը կաջակցի ողջամիտ համոզմունքին, որ ՄՇԲՈ կարող է տեղի ունենալ: Մինչև հաղորդման կազմելը, այդպիսի անձանցից կամ կազմակերպություններից չի պահանջվում գնահատել կամ որոշել, թե արդյոք հաղորդումը, որը նրանք մտադիր են կազմել, համապատասխանում է որևէ լրջության կամ ծանրության շեմին: Ներառվող անձանցից կամ կազմակերպություններից չի պահանջվում ապացուցել ենթադրյալ ՄՇԲՈ-ն կամ բավարարել որևէ ապացույցի պահանջ:

28. ՄՇԲՈ փաստացի արարքների կամ դրանց մասին կասկածների վերաբերյալ հաղորդումները պետք է ուսումնասիրվեն Վերստուգողի կողմից՝ համաձայն R2E2 հիմնադրամի համապատասխան քաղաքականության և ստանդարտների, ներառյալ, բայց չսահմանափակված լինելով R2E2 հիմնադրամի՝ ազդարարների և վկաների պաշտպանության վերաբերյալ քաղաքականությունով: Վերստուգողը պետք է լրջորեն վերաբերվի և մանրակրկիտ հետաքննի ենթադրյալ ՄՇԲՈ հաղորդումները այնպես, որ լինի տուժողների վրա կենտրոնացված, անկախ և օբյեկտիվ, ինչպես նաև առանց որևէ անձի կամ կազմակերպության կողմից վերահսկողության կամ ազդեցության, և մանրակրկիտ հետևելով չվնասելու, արդարության և պատշաճ գործընթացի սկզբունքներին:

29. Վերստուգողի ցանկացած հետաքննությունից հետո վերջինս միջոցներ է ձեռնարկում վերահսկելու իրավիճակը ՄՇԲՈ ցանկացած տուժածների և ենթադրյալ հանցագործների կարգավիճակի վերաբերյալ՝ պաշտպանելով հետաքննության, դրա բացահայտումների կամ դրա արդյունքների հետևանքով վրեժխնդիրներից: Ավելին, R2E2 հիմնադրամի տնօրենը պետք է իրականացնի

ցանկացած վարչական կամ կարգապահական միջոցներ, որոնք պետք է ձեռնարկվեն R2E2 հիմնադրամի կողմից հետաքննության արդյունքում:

VIII. Պաշտպանություն և հատուցումներ

30. Ցանկացած տուժող, ով հաղորդում է, փորձում է հաղորդել կամ, ենթադրվում է, որ հաղորդել է R2E2 հիմնադրամի հետ կապված գործողություններում ներառվող անձանց կողմից ՍՇԲՈՒ փաստացի արարքների կամ դրանց մասին կասկածների վերաբերյալ (ներառյալ կասկածելի ՍՇԲՈՒ մասին մտահոգություններ), կունենա ամբողջ պաշտպանության իրավունք (որը ներառում է անանունությունը, գաղտնիությունը և պաշտպանությունը վրեժխնդրությունից) և միջոցներ, որոնք տրամադրվում են «ազդարարներին», ինչպես սահմանված է Ազդարարների և վկաների պաշտպանության մասին R2E2 հիմնադրամի քաղաքականությամբ:
31. Ցանկացած այլ անձ, ով հայտնում է, փորձում է հաղորդել կամ ենթադրվում է, որ հայտնել է, կամ համագործակցում է, փորձում է համագործակցել, ենթադրվում է, որ պատրաստվում է համագործակցել կամ ենթադրվում է, որ համագործակցել է R2E2 Վերստուգողի հետ՝ R2E2 հիմնադրամի հետ կապված գործողություններում ներառվող անձանց կողմից ՍՇԲՈՒ փաստացի արարքների կամ դրանց մասին կասկածների վերաբերյալ, կհամարվի «ազդարարող» կամ «վկա», ինչպես հարկն է, և կունենա բոլոր համապատասխան պաշտպանության իրավունքները (որը ներառում է անանունությունը և գաղտնիությունը, և վրեժխնդրությունից պաշտպանությունը) և միջոցները, ինչպես սահմանված է Ազդարարների և վկաների պաշտպանության մասին R2E2 հիմնադրամի քաղաքականությամբ:
32. Ցանկացած առնչվող անձ, ով R2E2 հիմնադրամի հետ կապված գործունեություններում տուժել է մեկ այլ առնչվող անձի կողմից կատարված ՍՇԲՈՒ գործողությունից՝ կարող է պահանջել, որ R2E2 հիմնադրամը տրամադրի հետևյալ տեղեկատվությունն ու աջակցությունը.
- i. Տեղեկատվություն և խորհրդատվություն տեղեկացման ոչ ֆորմալ և պաշտոնական տարբերակների և թեժ գծերի վերաբերյալ, որոնք հասանելի են R2E2 հիմնադրամի ներսում և դրսում;
 - ii. Տեղեկատվություն առկա բժշկական ծառայությունների և աջակցության մասին;
 - iii. Տեղեկատվություն խորհրդատվության մասին, ներառյալ հոգեբանական-սոցիալական և սթրեսային խորհրդատվությունը;
 - iv. Տեղեկատվություն մատչելի, էժան առողջության ապահովագրության տարբերակների և ծառայությունների մասին;
 - v. Տեղեկատվություն և ուղղորդում ներքին և արտաքին ծառայություններին, որոնք մասնագիտացած են սեռական ոտնձգությունների, կանանց նկատմամբ բռնության կամ բռնության ենթարկված տղամարդկանց աջակցության մեջ; և
 - vi. Աջակցություն և ուղղորդում, թե ինչպես պետք է տեղեկացնել և ինչ սպասել տեղական իշխանություններից, հատկապես, եթե ենթադրյալ վարքագիծը հանցագործություն է;

33. Արտակարգ իրավիճակներում առնչվող անձի կողմից կատարված ՍՇԲՈ գործողություններից տուժած ցանկացած այլ առնչվող անձ, կարող է պահանջել, որ R2E2 հիմնադրամը տրամադրի միջանկյալ բժշկական օգնություն կամ այլ օժանդակ ծառայություններ, ինչպես պահանջվում է վնասի անհապաղ վերացման նպատակով:
34. R2E2 հիմնադրամի տարածքում կամ R2E2 հիմնադրամի կողմից կազմակերպված գործունեության կամ միջոցառման ժամանակ առնչվող անձի կողմից կատարված ՍՇԲՈ գործողություններից տուժած ցանկացած այլ առնչվող անձ՝ համաձայն սույն քաղաքականության VII-րդ բաժնի, կարող է պահանջել, որ R2E2 հիմնադրամն ապահովվի 33-րդ և 34-րդ հոդվածներով նախատեսված պաշտպանությամբ:
35. Առնչվող անձանց կողմից կատարված ՍՇԲՈ գործողությունները կամ ՍՇԲՈ փաստացի կամ կասկածյալ տուժողի դեմ վրեժխնդրությունը համարվում է անօրինական վարք կամ պայմանագրի խախտում և ենթակա է կարգապահական կամ այլ միջոցների՝ համապատասխան R2E2 հիմնադրամի քաղաքականությունների, կանոնների և ընթացակարգերի:
36. Ցանկացած անձ կամ կազմակերպություն, ով ներկայացնում է կեղծ կամ ապակողմնորոշիչ հաղորդագրություն, կարող է ենթարկվել վարչական կամ կարգապահական պատասխանատվության՝ R2E2 հիմնադրամի համապատասխան քաղաքականությունների, ուղեցույցների համապատասխան, ինչպես նաև R2E2 հիմնադրամի և անձի կամ կազմակերպության միջև գոյություն ունեցող ցանկացած պայմանագրային դրույթների:
37. R2E2 հիմնադրամի կողմից իրականացվող գործունեության ժամանակ, երբ ՍՇԲՈ գործողությունը, կամ վրեժխնդրությունը փաստացի կամ ենթադրյալ տուժողի դեմ կատարվում է առնչվող անձի կողմից, ինչը հիմնավորվել է R2E2 հիմնադրամի կողմից իրականացված հետաքննության արդյունքում, և ուղղիչ կամ կարգապահական միջոցներ են կիրառվել առնչվող անհատի նկատմամբ՝ Վերստուգողը կարող է առաջարկել, որ R2E2 հիմնադրամը (առանց անհարկի ձգձգումների) ձեռնարկի համապատասխան միջոցներ, ինչպիսիք են ուղղորդման կապերի և ծառայությունների տրամադրումը և խորհրդատվությունը ի շահ տուժողի:

IX. Քաղաքականության իրականացում, մոնիթորինգ, հաշվետվայնություն և փոփոխություն

38. R2E2 հիմնադրամի մարդկային ռեսուրսների կառավարման բաժինը պատասխանատու է սույն Քաղաքականությամբ նախատեսված առնչվող ֆիզիկական անձանց պարտավորությունների արդյունավետ իրականացման և մոնիթորինգի վերաբերյալ հոգաբարձուների խորհրդին տարեկան հաշվետվություն ներկայացնելու համար: Այն պետք է Վերստուգողի հետ համագործակցությամբ մշակի ուղեցույցներ և ընթացակարգեր սույն Քաղաքականությունը դրա ընդունումից անմիջապես հետո գործառնականացնելու և իրականացնելու համար:
39. Վերստուգողը պետք է առաջարկի բարելավումներ սույն Քաղաքականությունում և հարակից ընթացակարգերում՝ ՍՇԲՈ հավանականությունը նվազեցնելու համար, ինչպես նաև առնչվող անձանց

կողմից քաղաքականությանը հավատարիմ մնալու նպատակով: Վերստուգողը նաև պետք է վարի և հրապարակայնորեն բացահայտի հաշվետվությունների դեպքերի գրանցամատյան, ներառյալ ՍՇԲՈ վերաբերյալ՝ գործող ազդարարների և վկաների պաշտպանության R2E2 հիմնադրամի քաղաքականության սահմանափակումների և տեղեկատվության բացահայտման վերաբերյալ R2E2 հիմնադրամի համապատասխան քաղաքականության և ստանդարտների համաձայն:

40. Յուրաքանչյուր երեք տարին մեկ Վերստուգողը հոգաբարձուների խորհրդին կներկայացնի հաշվետվություն սույն Քաղաքականության իրականացման հետ կապված՝ դրանում փոփոխությունների վերաբերյալ առաջարկություններով հանդերձ: Նման հաշվետվությունները հաշվի կառնեն նոր չափանիշները կամ քաղաքականությունները, որոնք մշակվել և իրականացվել են գործընկերների և գործընկերների կողմից իրենց գործունեության շրջանակի վերաբերյալ և կհամապատասխանեցվեն քաղաքականության վերանայման ցիկլի հետ:

X. Ուժի մեջ մտնելու ամսաթիվ

41. Սույն Քաղաքականությունը ուժի մեջ է մտնում R2E2 հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատումից հետո:

ՀԱՎԵԼՎԱԾ XI - R2E2 հիմնադրամի քաղաքականությունը ազդարարների և վկաների պաշտպանության մասին

I. Ներածություն

- 1.1 R2E2 հիմնադրամը ընդունում է ազդարարների և վկաների կարևոր դերը Արգելված գործելակերպի և ոչ պատշաճ վարվելակերպի այլ գործողությունների բացահայտման գործում՝ R2E2 հիմնադրամին հնարավորություն ընձեռելով արդյունավետորեն կանխել, հայտնաբերել և մեղմել նման չարաշահումները և պաշտպանելու իր կառավարմանը վստահված միջոցները: Ազատարարներն ու վկաները կարևոր դերակատարություն ունեն R2E2 հիմնադրամի առաքելությանը նպաստելու գործում: Պաշտպանելով ազդարարներին և վկաներին R2E2 հիմնադրամը պաշտպանում է իր ֆինանսական, գործառնական և հեղինակային շիտակությունը, ինչպես նաև իր ջանքերը՝ իր մանդատի իրականացման գործում նշանակալի և հավակնոտ ներդրում ունենալու:
- 1.2 Ազդարարների և վկաների պաշտպանության քաղաքականությունը («քաղաքականությունը») խարդախության և կոռուպցիայի նկատմամբ R2E2 հիմնադրամի գրոյական հանդուրժողականության արտահայտությունն է և նպատակ ունի ապահովել խարդախության և բարեխղճության խախտումների բացահայտման հստակ ուղիներ: Դրանով R2E2 հիմնադրամը կնպաստի նման չարաշահումների արդյունավետ կանխարգելմանը և բացահայտմանը: Ավելին, այն հնարավորություն կտա R2E2 հիմնադրամին պաշտպանել իրեն վստահված միջոցներն ու ապահովել դրանց արդյունավետ օգտագործումը:

II. Նպատակ

- 2.1 Սույն քաղաքականության նպատակն է հանդիսանում սահմանել համապատասխան լիազորություններ զեկուցելու արգելված գործելակերպի և ոչ պատշաճ վարվելակերպի կասկածները՝ բարեխղճորեն և առանց վրեժխնդրության վախի, որպեսզի R2E2 հիմնադրամը կարողանա արդյունավետորեն պաշտպանել իր շահերը, միջոցներն ու առաքելությունը՝ բացահայտելով և մեղմելով ֆինանսական և հեղինակության ռիսկերը:

III. Սահմանումներ

- 3.1 Սույն քաղաքականության շրջանակներում ստորև նշված սահմանումներն ունեն հետևյալ նշանակությունները՝
- a) «**Խորհուրդ**» R2E2 Հիմնադրամի Հոգաբարձուների Խորհուրդն է;
- b) «**Շահերի բախում**» նշանակում է իրավիճակ, երբ կողմը կամ դրա անձնակազմի ցանկացած անդամ ներգրավված է որոշման կայացման գործընթացում և ունի շահ (կամ կարող է նման տպավորություն ստեղծել), որը կարող է ոչ պատշաճ ձևով ազդել վերջինիս կողմից պաշտոնական լիազորությունների ու պայմանագրային պարտավորությունների իրականացմանը, ինչպես նաև համապատասխան օրենքների և ենթաօրենսդրական ակտերի հետ համապատասխանության ապահովմանը;

- c) **«Իրականացնող մարմին կամ ենթակապալառու»** նշանակում է մարմին, որի միջոցով ծախսվում են R2E2 հիմնադրամի միջոցները կամ որը հանդիսանում է հիմնադրամից ենթադրամաշնորհի շահառու և/կամ ցանկացած մարմին որը իրականացնում է հիմնադրամի հետ առնչվող միջոցառում/ծրագիր, կամ դրա մի մասը;
- d) **«Ներառվող անձինք»** R2E2 Հիմնադրամի կամայական մակարդակում աշխատող անձինք են, ներառյալ (բայց չսահմանափակվելով) Տնօրենը, ղեկավար և այլ անձնակազմը, ինչպես նաև այն անձինք, ովքեր պայմանագրային առնչություն ունեն Հիմնադրամի հետ;
- e) **«Ապացույց»** - ցանկացած ֆիզիկական առարկա, արձանագրություն, փաստաթուղթ, վկայություն կամ այլ տեղեկատվություն, որը ձգտում է հաստատել մեղադրանքի կամ փաստի գոյությունը կամ բացակայությունը;
- f) **«Արտաքին կողմ»** - ցանկացած անձ կամ կազմակերպություն, (բացառությամբ սույն քաղաքականությամբ պաշտպանության ենթակա անհատի), որը նպաստում է, ներգրավված է կամ որևէ այլ կերպով առնչվում է R2E2 Հիմնադրամի հետ կապված որևէ գործունեությանը: Արտաքին կողմը կարող է լինել անհատ կամ կազմակերպություն և կարող է ներառել գործընկեր կազմակերպություններ և ենթակապալառուներ;
- g) **«Արտաքին ազդարարներ կամ վկաներ»** - արտաքին այն կողմերն են, որոնք, սույն քաղաքականությամբ սահմանված կարգով հանդիսանում են ազդարարներ կամ վկաներ;
- h) **«Կեղծ կամ չարամիտ հաղորդում»** նշանակում է ոչ ճշգրիտ կամ ապակողմնորոշիչ հաղորդում, որը արվել է անխոհեմ կամ գիտակցաբար կամ միտումնավոր՝ անձի կամ կազմակերպության նկատմամբ անհարկի առավելություն ստանալու կամ դրան վնաս պատճառելու նպատակով:
- i) **«R2E2 հիմնադրամին առնչվող գործողություն»** նշանակում է ցանկացած գործողություն, որը ֆինանսավորվում, կառավարվում կամ աջակցություն է ստանում R2E2 հիմնադրամի կողմից (իր, դոնորային կամ պետ բյուջեի միջոցների հաշվին) կամ ցանկացած գործողություն որը նյութական ազդեցություն ունի կամ կարող է ունենալ R2E2 հիմնադրամի վրա կամ այլ կերպով վերաբերում է հիմնադրամին;
- j) **«R2E2 հիմնադրամի անձնակազմ»** նշանակում է հիմնադրամի ցանկացած աշխատակից կամ անհատի կարգավիճակով ցանկացած ձևով ներգրավված խորհրդատու, որոնք R2E2 հիմնադրամի համար իրականացնում են պաշտոնական գործառույթ;
- k) **«Անձնակազմի կառավարման իրավական շրջանակը»** ներառում է բոլոր քաղաքականությունները, ցուցումները, ընթացակարգերն ու ցուցումները, որոնք կարգավորում են R2E2 անձնակազմի գործողությունները;
- l) **«Արգելված գործելաոճը»** R2E2 հիմնադրամի համապատասխան քաղաքականություններով սահմանված հատուկ վարքագիծն է: Արգելված գործելաոճը ներառում է այնպիսի գործողություններ, ինչպիսիք են կոռուպցիան, խարդախությունը, հարկադրանքը, պայմանավորվածությունը, խոչընդոտող գործողությունները, չարաշահումը, վրեժխնդրությունը ազդարարների կամ վկաների նկատմամբ, ինչպես նաև փողերի լվացումն ու անհաբեկչության ֆինանսավորումը:

- m) **«Վրեժխնդրություն ազդարարների կամ վկաների հանդեպ»** նշանակում է ցանկացած վնասակար գործողություն՝ ուղղակի կամ անուղղակի, առաջարկված, սպառնացող կամ ձեռնարկված ազդարարի կամ վկայի (կամ դրանց հետ փոխկապակցված անձի) նկատմամբ՝ պայմանավորված ազդարարի կամ վկայի կողմից կասկածվող սխալ գործելու կամ R2E2 հիմնադրամի հետաքննության հետ համագործակցությամբ;
- n) **«Հետաքննության ներքո գտնվող անձ»** - անձ, ով կասկածվում է Վերստուգողի կողմից ուղղակիորեն կամ վստահված անձի միջոցով հետաքննվող արգելված արարք կատարելու, խրախուսելու, մասնակցելու կամ ներգրավված լինելու մեջ;
- o) **«Աշխատակազմ»** - բոլոր այն անձինք, ովքեր համապատասխան նամակով նշանակվել են R2E2 հիմնադրամում որևէ պաշտոնի (անհատապես՝ «Անձնակազմի անդամ»);
- p) **«Ազդարարը»** այն անձը կամ կազմակերպությունն է, որը բարեխղճորեն և ողջամիտ հիմքերով հաղորդում է, փորձում է հաղորդել, ենթադրվում է, որ պատրաստվում է զեկուցել կամ ենթադրվում է, որ հայտնել է արգելված գործելաոճի վերաբերյալ կասկածներ (ներառյալ մտահոգությունները);
- q) **«Ոչ պատճառ արարք»** - այնպիսի վարք, որը խախտում է R2E2 հիմնադրամի քաղաքականությունը կամ զգալի ռիսկ է պարունակում R2E2 հիմնադրամի համար, քանի որ դա վնասակար է նրա շահերին, հեղինակությանը, գործունեությանը կամ կառավարմանը: Դա ներառում է, բայց չի սահմանափակվում սխալ վարքագծով, արգելված գործելակերպով և շահերի բախմամբ;
- r) **«Վկա»** նշանակում է ցանկացած անձ կամ կազմակերպություն, որը բարեխղճորեն համագործակցում է, կամ ենթադրվում է, որ պատրաստվում է համագործակցել, կամ ենթադրվում է, որ համագործակցել է հետաքննության հետ և տրամադրել է տեղեկատվություն կամ ապացույց:

IV. Կիրառման շրջանակ

- 4.1 Սույն քաղաքականությունը կիրառվում է ոչ պատշաճ արարքների մասին հայտնող ազդարարների և վկաների նկատմամբ, ովքեր, սույն քաղաքականությամբ սահմանված կարգով հայտնում են նման կասկածելի մասին: Վերստուգողի իրավասությանը պատկանող հարցերի վերաբերյալ կասկածվող ոչ պատշաճ արարքների մասին հաղորդումները պետք է քննարկվեն վերջինիս կողմից: Այն հաղորդումները կամ բողոքները, որոնք դուրս են այս շրջանակից, պետք է ուղղվեն կամ քննարկվեն ուղղակիորեն R2E2 Հիմնադրամի համապատասխան ստորաբաժանումների կամ օրինական կերպով գործող այլ մարմինների կողմից:
- 4.2 Ազդարարները կամ վկաները կարող են ներառել այն անձանց, ովքեր կասկածի տակ լինելով ոչ պատշաճ գործողություն իրականացնելու մեջ բողոքներ կամ վերանայման միջնորդություն են ներկայացնում Վերստուգողին;
- 4.3 Ցանկացած անձ կամ կազմակերպություն, ով ներկայացնում է կեղծ կամ չարամիտ հաղորդում, պաշտպանված չէ սույն քաղաքականությամբ և կարող է ենթարկվել պատժամիջոցների կամ կարգապահական տույժերի՝ համաձայն

R2E2 Հիմնադրամի համապատասխան քաղաքականության և ուղեցույցների, ինչպես նաև R2E2 Հիմնադրամի հետ առկա ցանկացած պայմանագրային համաձայնագրի դրույթների:

V. Հիմնական սկզբունքներ

- 5.1 R2E2 հիմնադրամը չպետք է հանդուրժի հաշվեհարդար ազդարարների և վկաների դեմ: Վրեժխնդիր լինելը ազդարարների և վկաների դեմ արգելված գործողություն է;
- 5.2 Ցանկացած անձ առանց կաշկանդվածության և վրեժխնդրությունից վախենալու կարող է ծանուցել Վերստուգողին իր ուշադրության կենտրոնում հայտնված կասկածվող ոչ պատշաճ արարքի մասին, ինչպես նաև համագործակցել Վերստուգողի հետ հետաքննության համատեքստում;
- 5.3 R2E2 հիմնադրամը, ներառյալ Վերստուգողին, պետք է ձեռնարկեն բոլոր հասանելի միջոցները Հիմնադրամի կարողությունների շրջանակներում՝ պաշտպանելու ազդարարներին և վկաներին, ովքեր բարեխղճորեն և ողջամիտ համոզմունքով, որ ներկայացված հաղորդումը, տեղեկատվությունը կամ ապացույցը ճիշտ է;
- 5.4 Ցանկացած անձ կարող է անանուն կերպով հայտնել ոչ պատշաճ գործողություն իրականացնելու մասին կասկածը կամ ապացույցներ կամ տեղեկություններ տրամադրել հետաքննության վերաբերյալ;
- 5.5 Ելնելով 9.4 և 9.5 պարագրաֆներից՝ R2E2 հիմնադրամը պետք է գաղտնի պահի ազդարարների և վկաների, նրանց մերձավոր ընտանիքի անդամների և համախոհների ինքնությունը (եթե նրանք դա խնդրեն);
- 5.6 R2E2 Հիմնադրամը պետք է ողջամիտ միջոցներ ձեռնարկի իր կարողությունների շրջանակներում՝ ապահովելու, որպեսզի պաշտպանվեն ոչ պատշաճ գործողություններ իրականացնելու մեջ կասկածվող անհատների հիմնական իրավունքներն;
- 5.7 Ոչ պատշաճ վարվելակերպի կասկածների մասին զեկուցելը ոչ մի կերպ չի պաշտպանում ազդարարին կամ վկային իրենց կողմից ոչ պատշաճ արարք կատարելուց բխող պատժամիջոցներից: Այնուամենայնիվ, կախված հանգամանքներից, համապատասխան պատժամիջոցը կամ պաշտպանության այլ միջոցը որոշելիս հաշվի են առնվում նրանց կողմից հաղորդում ներկայացնելու հանգամանքը և համագործակցության աստիճանը:

VI. Կասկածվող անօրինականության մասին զեկուցում և դրա հետաքննություն

- 6.1 Ցանկացած անձ կամ կազմակերպություն կարող է հաղորդում ներկայացնել Վերստուգողին ոչ պատշաճ գործելաոճի դրսևորումների կասկածների վերաբերյալ՝ սույն քաղաքականությամբ սահմանված կարգով: Սույն քաղաքականությամբ խրախուսվում է նման տեղեկատվության ներկայացումը Վերստուգողին, հատկապես եթե այն վերաբերում է ներառվող անձանց և գործընկեր կազմակերպություններին ու ենթակապալառուներին:

- 6.2 Հաշվի առնելով պաշտպանական մեխանիզմների առկայությունը՝ ներառվող անձինք պարտավոր են հնարավորինս շուտ զեկուցել ոչ պատշաճ գործելաոճի վերաբերյալ կասկածների մասին՝ դրա մասին տեղեկանալուց անմիջապես հետո: Դա իրականացնելու համար չի պահանջվում որևէ հաստատում կամ թույլտվություն R2E2 հիմնադրամի որևէ պաշտոնյայի կողմից;
- 6.3 Հաշվի առնելով պաշտպանական մեխանիզմների առկայությունը՝ R2E2 Հիմնադրամի ցանկացած պաշտոնյա կամ պատասխանատու անձ, ով ստանում է բարեխղճորեն կազմված ոչ պատշաճ գործելաոճի վերաբերյալ կասկածների մասին հաղորդում՝ պարտավոր է անհապաղ փոխանցել այդպիսի տեղեկատվությունը Վերստուգողին:
- 6.4 Համաձայն R2E2 Հիմնադրամի արգելված գործելաոճի և դրան վերաբերվող ցանկացած այլ քաղաքականության, գործընկեր կազմակերպություններն ու ենթակապալառուները պարտավոր են անհապաղ տեղեկացնել R2E2 հիմնադրամին R2E2 Հիմնադրամի գործունեությանն առնչվող արգելված գործելաոճի մասին ցանկացած կասկածների վերաբերյալ: Նման պարտավորություն պետք է պարունակի R2E2 հիմնադրամի հետ կնքվող յուրաքանչյուր պայմանագրում:
- 6.5 Բացառությամբ սույն քաղաքականության 6.6-րդ պարբերությունում նկարագրված իրավիճակների, վերը նշված 6.1-6.4 պարբերություններում նշված հաղորդումներն ու տեղեկությունը պետք է ուղարկվեն Վերստուգողին հետևյալ կոնտակտային եղանակների միջոցով՝ պայմանով, որ նշված կոնտակտային տվյալների ցանկացած փոփոխության մասին պետք տեղեկացվեն բոլոր կողմերը՝

Էլ փոստ: integrity@r2e2.am

Թեժ գիծ: + 374 10 588011

Փոստային Հասցե: ՀՀ, ք Երևան, Սայաթ Նովայի պողոտա 29/1, Վերականգնվող էներգետիկայի և Էներգախնայողության հիմնադրամ, Վերստուգողին

- 6.6 R2E2 Հիմնադրամի աշխատակազմի անդամի կամ նրա անմիջական ընտանիքի անդամի առնչությամբ ոչ պատշաճ գործելաոճի դրսևորումների վերաբերյալ կասկածի մասին հաղորդումը ներկայացվում է Վերստուգողին: Վերստուգողի, կամ նրա ենթակայության տակ գտնվող աշխատակազմի անդամի վերաբերյալ հաղորդումը ներկայացվում է Էթիկայի Հանձնաժողովին:
- 6.7 Ոչ պատշաճ գործելաոճի դրսևորումների վերաբերյալ կասկածի մասին հաղորդում ներկայացնող անհատներն ու կազմակերպությունները դա պետք է անեն բարեխղճորեն և, հնարավորության դեպքում, տրամադրեն իրենց մոտ առկա ցանկացած տեղեկատվություն կամ ապացույց, որը կհիմնավորի ողջամիտ համոզմունքը, որ նման արարք կարող էր տեղի ունենալ: Մինչև հաղորդման կազմումը, այդպիսի անձանցից կամ կազմակերպություններից չի պահանջվում գնահատել կամ որոշել, թե արդյոք հաղորդումը, որը նրանք մտադիր են կազմել, համապատասխանում է որևէ լրջության կամ ծանրության շեմին: Հաղորդում ներկայացնող անձանցից կամ կազմակերպություններից չի պահանջվում ապացուցել ենթադրյալ արարքը կամ բավարարել որևէ ապացույցի պահանջի:

- 6.8 Հետաքննությունների հաջող անցկացմանը աջակցելու նպատակով հաղորդումները պետք է լինեն հնարավորինս կոնկրետ: Հնարավորության սահմաններում դրանք պետք է ներառեն այնպիսի մանրամասներ, ինչպիսիք են՝
- ա) Կասկածելի ոչ բարեխիղճ գործելաոճի տեսակը;
 - բ) Ե՞րբ, որտեղ և ինչպես է տեղի ունեցել ենթադրյալ անօրինականությունը; և
 - գ) ով ներգրավված է եղել և կարող է տեղյակ լինել զեկուցվող հարցերի մասին;
- 6.9 Համապատասխան փաստաթղթերը կամ այլ ապացույցները պետք է ներառվեն հաղորդման մեջ կամ տրամադրվեն որքան հնարավոր է շուտ: Այնուամենայնիվ, վերը նշված մանրամասներից որևէ մեկի բացակայությունը չպետք է խանգարի հաղորդման ներկայացմանը, ինչպես նաև չի խանգարի Վերստուգողին կամ հետաքննության համար իրավասու որևէ այլ մարմնի հետաքննել ներկայացված հաղորդումները:
- 6.10 Ստորև Բաժին IX-ում նախատեսված երաշխիքները պետք է կիրառվեն այն անձանց նկատմամբ, ովքեր տեղեկություններ են տրամադրում ոչ պատշաճ գործելաոճի կասկածելի արարքների վերաբերյալ: Անանուն հաղորդումների քննությունը հեշտացնելու համար կստեղծվի դրանց ուսումնասիրության համար հատուկ ընթացակարգ;
- 6.11 Այն անձինք, ովքեր մտադիր են զեկուցել ոչ պատշաճ գործելաոճի կասկածելի արարքների վերաբերյալ և ովքեր անորոշ են հաղորդում ներկայացնելու կանոնների կամ սույն քաղաքականությամբ ընդգրկված որևէ հարցի վերաբերյալ, կարող են գաղտնի խորհրդատվություն ստանալ Վերստուգողից;
- 6.12 Ոչ պատշաճ գործելաոճի կասկածելի արարքների վերաբերյալ հաղորդումները պետք է պետք է հաշվառվեն և ուսումնասիրվեն R2E2 հիմնադրամի համապատասխան քաղաքականության և ստանդարտների համաձայն: Վերստուգողը լրջորեն և մանրակրկիտ հետաքննում է ոչ պատշաճ գործելաոճի կասկածելի արարքների վերաբերյալ հաղորդումները անկախ և օբյեկտիվ կերպով՝ իրականացնելով վարչական փաստահավաք հետաքննություն, առանց որևէ անձի կամ կազմակերպության կողմից վերահսկողության կամ ազդեցության, և արդարության և պատշաճ գործընթացի սկզբունքների մանրակրկիտ պաշտպանությամբ;
- 6.13 Այն դեպքերում, երբ ենթադրյալ ոչ պատշաճ գործելաոճի կասկածելի արարքների վերաբերյալ հաղորդումները ենթակա չեն Վերստուգողի կողմից հետաքննության, Վերստուգողը կարող է վերահասցեագրել նման հաղորդումները R2E2 Հիմնադրամի ներքին կամ արտաքին այլ մարմիններին:

VII. Վրեժխնդրության մասին հաղորդում ներկայացնելն ու դրա հետաքննությունը

- 7.1 Ցանկացած ազդարար կամ վկա, ով կարծում է, որ ինքը կարող է տուժել կամ տուժել է վրեժխնդրությունից՝ ենթադրյալ ոչ պատշաճ գործելաոճի կասկածելի արարքների վերաբերյալ հաղորդում ներկայացնելու կամ Վերստուգողի հետ համագործակցելու հետևանքով, պետք է այդ մտահոգության մասին հայտնի Վերստուգողին՝ սույն քաղաքականության 6.5-րդ կետում սահմանված կարգով:

7.2 Վրեժխնդրության մասին հաղորդման ներկայացումն և դրա հետաքննությունը իրականացվում են նույն կանոններով և ընթացակարգերով, ինչպիսիք սահմանվում են սույն քաղաքականության VI-րդ բաժնում:

7.3 Երբ, R2E2 Հիմնադրամի կողմից իրականացված գործողության կամ որոշման վիճարկման համատեքստում, ազդարարը կամ վկան, ով հանդիսանում է R2E2 Հիմնադրամի անձնակազմի անդամ, ողջամիտ համոզմունք ունի, որ ոչ պատշաճ գործողություն անելու կասկածի վերաբերյալ իր հաղորդումը կամ հետաքննության հետ համագործակցությունը նպաստող գործոն է հանդիսացել R2E2 Հիմնադրամի կողմից իր հանդեպ իրականացված վիճարկվող վնասակար գործողության կամ որոշման կայացման համար, ապացուցման բեռը ամբողջությամբ պետք է տեղափոխվի R2E2 Հիմնադրամի վրա՝ պարզ և համոզիչ ապացույցներով ցույց տալու համար, որ նույն գործողությունը կկատարվեր կամ կսպառնար հաղորդման կամ համագործակցության բացակայության պարագայում ևս:

7.4 Երբ ուսումնասիրվում է, թե արդյոք ներառվող ֆիզիկական անձը կամ ենթակապալառուն ներգրավվել է ազդարարի կամ վկայի նկատմամբ հաշվեհարդարի գործողություններում, Վերստուգողը կամ համապատասխան հետաքննության համար իրավասու ցանկացած այլ մարմին պետք է գնահատի, թե արդյոք՝

ա) Ազդարարը կամ վկան ներկայացրել է առաջին հայացքից վրեժխնդրության տարրեր պարունակող դեպք՝ ցույց տալով, որ նա ողջամիտ համոզմունք ունի, որ ոչ պատշաճ գործելաոճ կատարելու կասկածանքով իր հաղորդումը կամ համապատասխան հետաքննության հետ համագործակցությունը նպաստող գործոն է հանդիսացել կամ եղել է նախաձեռնմանը կամ այդ անհատի կամ գործընկեր կազմակերպության կամ ենթակապալառուի կողմից վիճարկվող վնասակար գործողության սպառնալիքը. և

բ) այդպիսի ներառված ֆիզիկական անձը կամ արարքը կատարող անձը կամ ենթակապալառուն հստակ և համոզիչ ապացույցներով ցույց են տվել, որ նույն գործողությունը կձեռնարկվեր կամ կսպառնար հաղորդման կամ համագործակցության բացակայության դեպքում:

VIII. Հետաքննության հետ համագործակցությունը

8.1 Ելնելով առկա պաշտպանությունից՝ բոլոր ներառված անհատները պարտավոր են համագործակցել (օրինակ՝ տրամադրելով տեղեկատվություն, ապացույցներ կամ ցուցմունքներ) որպես վկաներ՝ կասկածելի ոչ պատշաճ գործելաոճի հետաքննության ընթացքում: R2E2 Աշխատակազմի համար այս պարտականությունը ենթակա չէ որևէ վերահսկողի կամ այլ անձի կամ R2E2 Հիմնադրամի ստորաբաժանման ղեկավարի կողմից թույլտվության, և համագործակցության ձախողումը կարող է հանգեցնել կարգապահական միջոցների, ինչպես նախատեսված է R2E2 Հիմնադրամի համապատասխան քաղաքականություններում և ուղեցույցներում:

8.2 Համաձայն R2E2 Հիմնադրամի համապատասխան քաղաքականությամբ նախատեսված սկզբունքների, գործընկեր կազմակերպությունները և ենթակապալառուները պարտավոր են լիովին համագործակցել R2E2 Հիմնադրամի հետ վերջինիս վերաբերող ցանկացած հետաքննության ընթացքում՝ դրա հետ կապված արգելված գործունեության կասկածների

վերաբերյալ հաղորդումների վերաբերյալ և ձեռնարկել բոլոր համապատասխան միջոցները՝ հետաքննության ենթակա համապատասխան անձանց և կազմակերպությունների լիարժեք համագործակցությունը ապահովելու նպատակով, ներառյալ, R2E2 Հիմնադրամի կողմից լիազորված անձի համապատասխան անձանց հետ հանդիպումների կայացման աջակցության ցուցաբերումը, ինչպես նաև ստուգի նրանց բոլոր համապատասխան հաշիվները, գրառումները և այլ փաստաթղթերը և փոխանցի դրանք հետաքննության կողմից ուսումնասիրություն իրականացնելու նպատակով:

8.3 Վերստուգողը կարող է պահանջել այլ անձանցից, որոնք ներառված ֆիզիկական անձինք կամ ենթակապալառուների ներկայացուցիչներ չեն, որպեսզի համագործակցեն որպես վկաներ հետաքննության ընթացքում;

8.4 Վերստուգողի կողմից իրականացվող հետաքննության բոլոր վկաները պետք է բարեխղճորեն համագործակցեն և տրամադրեն տեղեկատվություն կամ ապացույցներ, որոնք, իրենց կարծիքով, ճիշտ են:

IX. Ազդարարների և վկաների պաշտպանությունը

Անանունություն և գաղտնիություն

9.1 Ցանկացած անձ կարող է անանուն կերպով ներկայացնել ոչ պատշաճ գործողության կասկածների վերաբերյալ հաղորդում: Ազդարարները կամ վկաները կարող են գաղտնիություն պահանջել իրենց ինքնության, իրենց մերձավոր ընտանիքի անդամի(ների) կամ գործընկեր(ների) ինքնության և հետաքննության ընթացքում կամ դրանից հետո փոխանցված կոնկրետ տեղեկատվության վերաբերյալ: Վերստուգողը կկատարի գաղտնիության վերաբերյալ պահանջները, որքան հնարավոր է հետաքննության օրինական կարիքների շրջանակներում:

9.2 Հավատարիմ մնալով R2E2 Հիմնադրամի քաղաքականությանն ու ընթացակարգերին՝ Վերստուգողը հնարավորինս կպաշտպանի ազդարարների և վկաների կողմից տրամադրված ինքնությունը և գաղտնի տեղեկատվությունը չարտոնված բացահայտումից՝ նախքան հետաքննությունը, դրա ընթացքում և դրանից հետո՝ օգտագործելով բոլոր հասանելի միջոցները, ներառյալ ֆիզիկական, էլեկտրոնային, և ընթացակարգային հսկողությունը:

9.3 Վերստուգողը հետաքննության ընթացքում համապատասխան միջոցներ կձեռնարկի՝ հետաքննության հետ կապված ցանկացած ոչ հրապարակային տեղեկատվության գաղտնիությունը պաշտպանելու համար և համապատասխան միջոցներ կձեռնարկի՝ հետաքննության արդյունքների չարտոնված բացահայտումը կանխելու համար: Որոշակի հանգամանքներում Վերստուգողը կարող է նաև գաղտնի պահել հետաքննության մեջ ներգրավված հետաքննիչների ինքնությունը:

9.4 Այն դեպքերում, երբ 9.2-րդ և 9.3-րդ պարբերություններում նշված գաղտնի տեղեկատվության բացահայտումը կարող է օրինականորեն անհրաժեշտ լինել հետաքննությունը շարունակելու համար, Վերստուգողը պետք է ապահովի ազդարարների, վկաների և հետաքննության ցանկացած այլ կողմի, ում գաղտնիությունը ենթակա է բացահայտման, համաձայնությունը:

9.5 Բացառիկ հանգամանքներում R2E2 Հիմնադրամը կարող է բացահայտել 9.2-րդ և 9.3-րդ կետերում նշված տեղեկատվությունը, երբ նման բացահայտում

պահանջվում է R2E2 հիմնադրամից դատական վարույթում կամ այլ իրավական պարտավորությունների կատարման համար, ինչպիսիք են իրավապահ մարմինների կողմից պարտադրվածները, կամ երբ R2E2 հիմնադրամը նախատեսում է կիրառել տույժեր և կարգապահական տույժեր՝ ի պատասխան հաղորդման, որը ճանաչվել է կեղծ և չարամիտ: Նման դեպքերում R2E2 հիմնադրամը պետք է տեղեկացնի ազդարարին, վկային կամ 9.2-րդ և 9.3-րդ պաշտպանված ցանկացած այլ կողմի բացահայտման անհրաժեշտության մասին՝ բացահայտումից առաջ ողջամիտ ժամկետում:

9.6 Վերստուգողը կունենա միանձնյա հասանելիություն հետաքննության փաստաթղթերի և այլ ապացույցների նկատմամբ, և իրավասու է որոշել, թե արդյոք դրանք՝ չիմբազրված կամ խմբագրված, կարող են բացահայտվել այլ անձանց, բացի Վերստուգողի կամ R2E2 հիմնադրամի անձնակազմից, որոնք աշխատում են Վերստուգողի իրավասության ներքո:

9.7 Հետաքննությանը ցանկացած կարգավիճակով ներգրավված Վերստուգողի անձնակազմից պահանջվում է պահպանել և պաշտպանել հետաքննության հետ կապված տեղեկատվության գաղտնիությունը, ներառյալ հետաքննության սուբյեկտների, վկաների կամ այլ շահագրգիռ կողմերի ինքնությունը:

9.8 Ազդարարները պետք է տեղեկացվեն Վերստուգողի կողմից հարցի վերաբերյալ վերանայման կամ հետաքննության արդյունքների մասին, ներառյալ՝ արդյոք հիմնավորվել է կասկածվող ոչ պատշաճ գործողությունը և արդյոք ձեռնարկվել են կարգապահական միջոցներ, տույժեր կամ այլ միջոցներ: Նման տեղեկատվությունը ենթակա է R2E2 հիմնադրամի տեղեկատվության բացահայտման քաղաքականության կանոններին:

X. Ներառվող անձանց պաշտպանությունը

10.1 Ազդարարներին և վկաներին, նրանց խնդրանքով, ժամանակավոր պաշտպանություն կտրամադրվի առանց ուշացման, մինչև հետաքննությունը կամ դրա արդյունքների վերանայումը կամ դրա ընթացքում՝ ինչպես դա անհրաժեշտ է նրանց անվտանգությունն ու բարեկեցությունը պաշտպանելու համար:

10.2 Եթե ողջամիտ մտավախություն կա, որ ներառված անձը, որը համարվում է ազդարար կամ վկա, կամ նրա մերձավոր ընտանիքի անդամ(ներ)ը կամ գործընկեր(ներ)ը, կարող է տուժել վրեժխնդրությունից, որը կարող է ենթադրել սպառնալիք կամ իրական վնաս անձնական անվտանգությանը և բարեկեցությանը, Վերստուգողը խորհուրդ է տալիս R2E2 Հիմնադրամի տնօրենին ձեռնարկել համապատասխան պաշտպանական միջոցներ՝ ապահովելու այդ ներառված անձի, նրա ընտանիքի մերձավոր անդամ(ներ)ի կամ գործընկեր(ներ)ի անվտանգությունն ու բարեկեցությունը:

10.3 Այն դեպքերում, երբ վրեժխնդրությունը ներառվող անձ հանդիսացող ազդարարի կամ վկայի նկատմամբ հիմնավորվել է հետաքննության միջոցով, ներառված անձը կարող է պահանջել, և Վերստուգողը կարող է խորհուրդ տալ, որ R2E2 Հիմնադրամը համապատասխան միջոցներ ձեռնարկի: Վերստուգողը կխորհրդակցի տնօրենի հետ՝ կապված իրավական պաշտպանության միջոցների կիրառելիության, համաչափության և վարչական օրենսդրության հետ համապատասխանության վերաբերյալ: Իրավապաշտպան միջոցները ներառում են պատասխան գործողության չեղարկումը կամ դադարեցումը, և,

անհրաժեշտության դեպքում, աշխատանքի վերականգնումը կամ պայմանագրի վերակնքումը, ինչպես նաև, որ R2E2 Հիմնադրամը վճարի փոխհատուցում այն չափով, որը ողջամտորեն անհրաժեշտ է՝ նշված ազդարարին կամ վկային կրած իրական վնասները փոխհատուցելու համար: Տնօրենը կամ Վերստուգողը, անհրաժեշտության դեպքում, պետք է որոշեն և պահանջեն R2E2 Հիմնադրամից համապատասխան փոխհատուցման իրականացումը: Այն դեպքում, երբ Տնօրենը համամիտ չէ Վերստուգողի առաջարկությունների հետ, հիմնավորելով ոչ համարժեքությամբ կամ հիմնադրամի շահերի հետ անհամապատասխանությամբ՝ նա պետք է առաջարկի այլընտրանքային միջոցներ:

Արտաքին ազդարարների ու վկաների համար պաշտպանության մեխանիզմները

- 10.4 Արտաքին ազդարարները և վկաները իրավունք ունեն օգտվելու Բաժին 9-ով նախատեսված պաշտպանության իրավունքից:
- 10.5 R2E2 հիմնադրամը պետք է ձգտի ապահովել, որ արտաքին ազդարարները և վկաները պաշտպանված լինեն ներառված անձանց կողմից վրեժխնդրությունից: Ներառված անձինք, ովքեր վրեժխնդիր են լինում արտաքին ազդարարների և վկաների դեմ, պետք է ենթարկվեն ուղղիչ կամ կարգապահական միջոցների կամ պատժամիջոցների՝ համաձայն R2E2 հիմնադրամի քաղաքականության և ուղեցույցների: Իրականացնող կազմակերպությունները կամ ենթակապալառուները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներել են, խրախուսել, մասնակցել կամ ներգրավվել են ազդարարների կամ վկաների դեմ հաշվեհարդարի մեջ, կարող են ենթարկվել պատժամիջոցների՝ համաձայն R2E2 հիմնադրամի համապատասխան քաղաքականության և իրավական համաձայնագրի, որը կարող է կնքված լինել նրանց միջև:
- 10.6 Եթե արտաքին ազդարարը կամ վկան, նրա ընտանիքի մերձավոր անդամները կամ գործընկերները կարող են ենթարկվել կամ ենթարկվել վրեժխնդրության՝ կասկածելի ոչ պատշաճ գործողության մեջ ներգրավված լինելու մասին հաղորդման կամ Վերստուգողի հետաքննության հետ համագործակցության պատճառով, R2E2 Հիմնադրամը պետք է ապահովի անհրաժեշտ պաշտպանություն՝ վրեժխնդրության ռիսկերը նվազեցնելու համար:
- 10.7 Երբ վրեժխնդիր լինելն արտաքին ազդարարի կամ ականատեսի դեմ ներառված անձի կամ իրականացնող կազմակերպության կամ ենթակապալառուի կողմից հիմնավորվել է հետաքննության միջոցով, և 9.14 կետի դրույթներին համաձայն կիրառվել են ուղղիչ կամ կարգապահական միջոցներ, կամ կիրառվել են պատժամիջոցներ, ապա Վերստուգողը կարող է առաջարկել, որպեսզի R2E2 հիմնադրամը կամ իրականացնող կազմակերպությունը կամ ենթակապալառուն համապատասխան անհապաղ միջոցներ ձեռնարկեն՝ ի շահ այդպիսի արտաքին ազդարարի կամ վկայի:

XI. Արտաքին հաղորդումներ

- 11.1 Վրեժխնդրությունից պաշտպանությունը տարածվում է ներառված անձանց վրա, ով համապատասխան հաղորդում է ներկայացնում համապատասխան կասկածների վերաբերյալ հաստատված ներքին մեխանիզմներից դուրս գտնվող կազմակերպությանը, որտեղ այդ անձը կարող է ցույց տալ, որ՝

ա) Նման հաշվետվությունն անհրաժեշտ է հետևյալից խուսափելու համար.

- i. Հասարակության առողջության և անվտանգության զգալի սպառնալիք;
- ii. Էական վնաս R2E2 հիմնադրամի գործառնություններին. կամ
- iii. Ազգային կամ միջազգային իրավունքի խախտում;

բ) Ստեղծված ներքին մեխանիզմներն անբավարար են, քանի որ.

- i. Ներառված անձը ողջամիտ հիմքեր ունի ենթադրելու, որ հնարավոր չէ հաղորդում ներկայացնել ենթադրյալ ոչ պատշաճ գործելաոճի մասին սահմանված ներքին ընթացակարգերի միջոցով, քանի որ բոլոր խողովակները կենթարկեն ներառված անձին հաշվեհարդարի R2E2 հիմնադրամի շրջանակներում;
- iv. Ներառված անձը ողջամիտ հիմքեր ունի ենթադրելու, որ հնարավոր չէ հաղորդում ներկայացնել ենթադրյալ ոչ պատշաճ գործելաոճի մասին սահմանված ներքին ընթացակարգերի միջոցով, քանի որ բոլոր նման խողովակները հավանականություն կստեղծեն, որ արարքի հետ կապված ապացույցները կթաքցվեն կամ ոչնչացվեն; կամ
- v. Ներառված անձը նախկինում հայտնել է ենթադրյալ ոչ պատշաճ գործելաոճի դրսևորման մասին սահմանված ներքին խողովակների միջոցով (և ոչ անանուն հիմունքներով) և նման հաղորդում ներկայացնելուց հետո վեց ամսվա ընթացքում գրավոր չի տեղեկացվել հարցի կարգավիճակի մասին; և

գ) Ներառված ֆիզիկական անձը նման հաշվետվության համար որևէ կողմից չի ընդունում վճարում կամ չի ստանում որևէ այլ օգուտ:

11.2 Արտաքին աղբյուրներից ստացված հաղորդումները, որոնք կազմվել են սույն քաղաքականության 10.1 կետին համապատասխան երրորդ կողմերի առջև դրված գաղտնիության պարտավորություններին, չեն համարվի որպես տեղեկատվության բացահայտման հետ կապված պարտավորությունների խախտում, ինչպես նախատեսված է R2E2 հիմնադրամի քաղաքականություններում և ուղեցույցներում:

XII. Ընթացակարգային երաշխիքներ

12.1 Ցանկացած ազդարարի, վկայի կամ հետաքննության սուբյեկտի համար ընթացակարգային երաշխիքները պետք է ապահովվեն հետաքննության ընթացքում՝ համաձայն միջազգային լավագույն փորձի, ինչպես մշակված է Վերստուգողի հետաքննության չափորոշիչներում և ընթացակարգերում: Ընթացակարգային երաշխիքները պետք է ներառեն.

ա) Ցանկացած անձ կամ կազմակերպություն, որը ներգրավված է ենթադրյալ ոչ պատշաճ գործելաոճի մասին հաղորդման մեջ, պետք է ողջամիտ ժամկետում ծանուցվի իր դեմ կազմված հաղորդման վերաբերյալ, պայմանով, որ այս ծանուցումը չի խոչընդոտում կասկածվող արարքների հետաքննության ընթացակարգի առաջընթացին; և

բ) Արդար դատաքննության սկզբունքի համաձայն՝ որևէ բացահայտում չպետք է արվի ներառված անձի կամ կազմակերպության վերաբերյալ, եթե այդ անձը կամ կազմակերպությունը հնարավորություն չի ունեցել արձագանքելու հաղորդմանը:

12.2 R2E2 Հիմնադրամի աշխատակազմի ընթացակարգերը և ընթացակարգային իրավունքները կարգապահական միջոցների որոշման և դրանց նկատմամբ ցանկացած վարչական վերանայման կամ բողոքարկման հետ կապված պետք է իրականացվեն Մարդկային ռեսուրսների իրավական շրջանակի դրույթներին համապատասխան:

XIII. Հաղորդակցություն, կարողությունների հզորացում և համագործակցություն

13.1 Վերստուգողը հասանելի բոլոր միջոցների կիրառմամբ ակտիվորեն հայտնի կդարձնի և լայնորեն կհաղորդի R2E2 Հիմնադրամի այս և արգելված գործելաոճի վերաբերյալ այլ քաղաքականություններն ու ընթացակարգերը ներառված ֆիզիկական անձանց, իրականացնող կազմակերպություններին կամ ենթակապալառուներին և այլ շահագրգիռ կողմերին: Նա պետք է ապահովի, որ ոչ պատշաճ գործելաոճի վերաբերյալ հաղորդում ներկայացնելու ուղիները հեշտությամբ հասանելի լինեն բոլորի համար:

13.2 Սույն քաղաքականության արդյունավետ իրականացման համար Վերստուգողը կանցկացնի համապատասխան ուսուցման միջոցառումներ՝ համակարգելով և համագործակցելով R2E2 հիմնադրամի համապատասխան ստորաբաժանումների, իրականացնող կազմակերպությունների, ենթակապալառուների և այլ շահագրգիռ կողմերի հետ: Վերստուգողը կխթանի ուսուցման իրականացումը, կներգրավվի լավագույն փորձի փոխանակման հարթակներում, կիրականացնի այլ միջոցառումներ, որոնք կարող են օգտակար լինել R2E2 հիմնադրամի հետ կապված գործողությունների իրականացման համար և կուսումնասիրի ոչ ֆինանսական խրախուսման վրա հիմնված մոտեցման մշակումը՝ աջակցելու բարեխիղճ հաղորդումներ ներկայացնողներին:

XIV. Քաղաքականության հետ կապված վարչարարություն, մոնիթորինգ, հաշվետվայնություն և դրա վերանայում

14.1 Վերստուգողը պատասխանատու է սույն քաղաքականության իրականացման համար: Վերստուգողը պետք է համագործակցի այլ ստորաբաժանումների հետ՝ խորհուրդ տալու և ապահովելու քաղաքականության արդյունավետ իրականացումը, ներառյալ այն, որ իրականացնող կազմակերպությունները և ենթակապալառուներն ունեն ազդարարման և վկաների պաշտպանության արդյունավետ քաղաքականություն և գործելակերպ, և որ վերը նշված այս և այլ համապատասխան պարտավորությունները նախատեսված են R2E2 հիմնադրամի և իրականացնող կազմակերպությունների կամ ենթակապալառուների միջև կնքված պայմանագրերով:

14.2 Վերստուգողը տարեկան կտրվածքով հաշվետվություն է ներկայացնում Հոգաբարձուների խորհրդին: Մինչև դա անելը, Վերստուգողը հաշվետվությունը ներկայացնում է Տնօրենին ի գիտություն, որը հնարավորություն կունենա դիտողություններ ներկայացնել Վերստուգողի և Խորհրդի կողմից քննարկման ընթացքում:

14.3 Վերստուգողը պարբերաբար հրապարակային հաշվետվություններ է ներկայացնում սույն քաղաքականության պահանջների իր կողմից կատարման վերաբերյալ: Վերստուգողը պետք է վարի և հրապարակայնորեն բացահայտի ենթադրյալ ոչ պատշաճ գործելաոճի մասին հաղորդումներ

գրանցամատյան՝ սույն քաղաքականության սահմանափակումների շրջանակներում և համաձայն R2E2 հիմնադրամի տեղեկատվության բացահայտման քաղաքականության և չափանիշների:

- 14.4 Վերստուգողը պետք է ակտիվորեն վերահսկի և վերանայի սույն քաղաքականության իրականացումը և ազդարարների և վկաների պաշտպանության արդյունավետությունը R2E2 Հիմնադրամի հետ կապված հարաբերություններում՝ հետևելով ռիսկերի վրա հիմնված մոտեցմանը: Նման մոնիթորինգային գործողությունները և վերանայումները կարող են ներառել նաև հանրային քննարկումներ:

XV. Քաղաքականության ուժի մեջ մտնելը

- 15.1 Սույն քաղաքականությունը ուժի մեջ է մտնում R2E2 հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից դրա հաստատումից հետո:

ՀԱՎԵԼՎԱԾ XII – Վերստուգողի պարտականությունների շրջանակ

I. Ընդհանուր սկզբունքներ

- 1.1 R2E2 հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը սահմանում է Վերստուգողի գործառույթ՝ խարդախության, կոռուպցիայի և արգելված այլ դրսևորումների (հարկադրանք, անբարեխիղճ պայմանավորվածություններ, շահերի բախում և վրեժխնդրություն ազդարարների դեմ) վերաբերյալ միջազգային լավագույն փորձին համապատասխան և շահագրգիռ մարմինների հետ համագործակցությամբ հետաքննություններ իրականացնելու և խորհրդին պարբերաբար զեկույցներ ներկայացնելու նպատակով:
- 1.2 Վերստուգողը, իր պարտականություններն իրականացնում է լիակատար անկախություն պայմաններում: Հետաքննություն իրականացնելու նպատակով նա լիարժեք հասանելիություն պետք է ունենա R2E2 հիմնադրամի բոլոր համապատասխան փաստաթղթերին ու տվյալներին (այդ թվում՝ Էլեկտրոնային տվյալներին): Իր աշխատանքի ընթացքում Վերստուգողը պետք է սերտորեն համագործակցի R2E2 հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանումների հետ: Վերստուգողը զեկուցում է Հոգաբարձուների խորհրդին ուղղակիորեն:
- 1.3 Բոլոր բողոքներն ու մեղադրանքները R2E2 հիմնադրամի կամ նրա հետ կապված անձանց դեմ, որոնք գտնվում են Վերստուգողի իրավասության ներքո, ինչպես սահմանված է սույն տեխնիկական առաջադրանքով, կուսումնասիրվեն Վերստուգողի կողմից: Վերստուգողը պարտավոր է ազնվորեն պահպանել օբյեկտիվություն, անաչառություն և արդարություն՝ հետաքննության ամբողջ ընթացքում:
- 1.4 Վերստուգողը պետք է զերծ մնա ոչ պատշաճ ազդեցությունից կամ վրեժխնդրության վախից:
- 1.5 Վերստուգողը ենթարկվում է Աշխատակազմի վարքագծի կանոնադրքին: Այս կապակցությամբ Վերստուգողը ժամանակին կբացահայտի ցանկացած փաստացի կամ հնարավոր շահերի բախման երևույթը, որը կարող է ազդեցություն ունենալ այն հետաքննության վրա, որին նա մասնակցում է:
- 1.6 Վերստուգող կողմից իրականացվող հետաքննությունները չեն հանդիսանալու դատական կամ կիսադատական գործընթաց և այդ ընթացքում ձեռք բերված ապացույցները պարզապես պետք է հանդիսանան ողջամիտ դատողություններ կասկածների կամ պնդումների հիմնավորվածության վերաբերյալ:
- 1.7 Հետաքննության արդյունքները հիմնված կլինեն փաստերի և հարակից վերլուծությունների վրա: Հետաքննության սուբյեկտին հնարավորություն կտրվի բացատրել վարքագծի պատճառներն ու տրամադրել նման բացատրությունը հաստատող տեղեկատվություն:
- 1.8 Եթե Վերստուգողը հետաքննության ընթացքում բավարար տեղեկատվություն չի գտնում կասկածը կամ պնդումը հիմնավորելու համար, նա պետք է գրավոր կերպով ներկայացնի իր բացահայտումները, փակի հետաքննությունը և տեղեկացնի R2E2 հիմնադրամի համապատասխան մարմիններին:

- 1.9 Եթե Վերստուգողի կողմից իրականացված հետաքննության արդյունքները ցույց են տալիս, որ բողոքը գիտակցաբար կեղծ է եղել, խնդրո առարկա հանդիսացող հարցը կուղարկի տնօրենին՝ հետագա գործողությունների համար:
- 1.10 Վերստուգողը հետաքննության ընթացքում համապատասխան միջոցներ կձեռնարկի՝ հետաքննության հետ կապված ցանկացած ոչ հրապարակային տեղեկատվության գաղտնիությունն ապահովելու և հետաքննության արդյունքների չարտոնված բացահայտումը կանխելու նպատակով:
- 1.11 R2E2 հիմնադրամը չի նախատեսում վճարել վկաներին կամ ազդարարներին: Սակայն, Վերստուգողը կարող է թույլատրել վկաների կամ ազդարարների հետ հանդիպելու նպատակով վերջիններիս կողմից կատարված ողջամիտ ծախսերի փոխհատուցումը:
- 1.12 Վերստուգողը կարող է ներգրավել արտաքին կողմերին (օրինակ՝ դատաբժշկական փորձաքննության իրականացնող կազմակերպություններ)՝ աջակցելու իր կողմից իրականացվող հետաքննությանը:

II. Հիմնական պարտականություններ

2.1 Վերստուգողի հիմնական պարտականություններն են՝

- Ծառայել որպես հաղորդակցության սկզբնական կետ R2E2 հիմնադրամի քաղաքականությունների ու ընթացակարգերի խախտումների բոլոր ենթադրյալ և կասկածելի միջադեպերի ուսումնասիրության համար՝ ներառյալ R2E2 հիմնադրամի գործունեության ընթացքում վերջինիս աշխատակիցների կամ ենթակապալառուների կողմից խարդախության կամ կոռուպցիայի դրսևորումները կորպորատիվ գնումների կամ ծրագրերի իրականացման ցանկացած գործառնության առնչությամբ:
- Գրանցել բոլոր հաղորդումներն և ուսումնասիրել դրանք՝ Վերստուգողի իրավասությանը պատկանելիության և այլ դեպքերի նկատմամբ դրանց առաջնահերթության որոշման տեսանկյունից, հաշվի առնելով հնարավոր խախտման դրամական արժեքը, ինչպես նաև ֆինանսական և հեղինակության ռիսկերի հնարավորությունն ու ազդեցությունը:
- Ընդունել համապատասխան ընթացակարգեր՝ պարզելու, թե արդյոք տեղի է ունեցել R2E2 հիմնադրամի քաղաքականությունների ու ընթացակարգերի խախտում, հավաքել բավարար համապատասխան ապացույցներ, փորձել բացահայտել խախտողներին և խախտման չափը:
- Քննել և որոշել գործընկեր կազմակերպությունների կամ ենթակապալառուների, խորհրդատուների, ծառայություններ մատուցողների կամ այլ արտաքին շահագրգիռ կողմերի կամ R2E2 հիմնադրամի աշխատակազմի անդամների վերաբերյալ ենթադրյալ կամ կասկածելի խախտումների իսկությունը, զեկուցել հետաքննությունների արդյունքների մասին համապատասխան մարմիններին և անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկություններ, որոնք բխում են կատարված բացահայտումներից:
- Համապատասխան մարմիններին տրամադրել հետաքննական եզրակացություններ՝ անհրաժեշտ գործողությունների (այդ թվում՝ հնարավոր պատժամիջոցների վերաբերյալ) որոշելու համար R2E2 հիմնադրամի միջոցների

ուղղակի կամ անուղղակի օգտագործմամբ (ներառյալ գնումների գործընթացներում) բողոքների վերաբերյալ:

- Հետաքննել R2E2 հիմնադրամի անձնակազմի ոչ պատշաճ վարքագծի մասին պնդումները՝ ներառյալ հիմնադրամի աշխատակազմի վարքագծի կանոնագրքի և բարեխղճության այլ կանոնների խախտումները, ինչպես սահմանված է սույն հանձնարարականով (ներառյալ տնօրենի կողմից Վերստուգողին ուղղված դեպքերը): Հետաքննության ընթացքում համագործակցել R2E2 հիմնադրամի տնօրենի և կառուցվածքային ստորաբաժանումների հետ: Հնարավոր կարգապահական տույժերի վերաբերյալ որոշումներ կայացնելու նպատակով զեկուցել համապատասխան մարմիններին:
- Տնօրենին վերաբերյալ հարցադրումներ հետաքննելիս Հոգաբարձուների խորհրդի ուշադրությանը ներկայացնել ոչ պատշաճ վարքագծի կամ չարաշահումների վերաբերյալ ցանկացած հետաքննության արդյունքները:
- Տնօրենի հետ խորհրդակցելով՝ առաջարկություններ ներկայացնել քաղաքականությունների և ընթացակարգերի բարելավման վերաբերյալ՝ մեղմելու R2E2 հիմնադրամի գործունեության ամբողջականության խախտումների հնարավորությունները, ներառյալ գործակալների և միջնորդների միջոցով իրականացվողները:
- Էթիկայի և աուդիտի կոմիտեի համապատասխան պահանջով վերջինիս տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն՝ իր լիազորություններին համապատասխան գործառույթների արդյունավետ իրականացման նպատակով:
- Հոգաբարձուների խորհրդին զեկուցել իր գործողությունների մասին, ներառյալ հետաքննության արդյունքների վերլուծությունների և ցանկացած մեղմման գործողությունների եվրաբերյալ:
- Համագործակցելով R2E2 հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանումների և տնօրենի հետ՝ նպաստել R2E2 հիմնադրամի քաղաքականությունների ու ընթացակարգերի խախտումներին հակազդելու գործիքակազմի վերաբերյալ իրազեկմանը, ներառյալ բոլոր գործընկեր կազմակերպությունների և ենթակապալառուների աշխատակազմի ներկայացուցիչներին:
- Խորհրդակցել և համագործակցել բազմակողմ հիմնադրամների, միջազգային ֆինանսական հաստատությունների և այլ համապատասխան կառույցների հետ՝ չարաշահումներին հակազդելու լավագույն փորձի փոխանակման նպատակով:
- Դիտարկել և հոգաբարձուների խորհրդի հաստատմանը ներկայացնել բազմակողմ հիմնադրամների և միջազգային ֆինանսական հաստատությունների հետ տեղեկատվության փոխանակման արդյունքներին վերաբերյալ:
- Պատրաստել և հոգաբարձուների խորհրդին ներկայացնել տարեկան հաշվետվություն՝ ամփոփելով իր կողմից իրականացված գործունեության արդյունքները:

III. Հիմնադրամի Վերահսկողի, ինչպես նաև գործընկեր կազմակերպությունների և միջնորդների քաղաքականությունների ու ընթացակարգերի դերերի և պարտականությունների սահմանում

- 3.1 Վերստուգողը պետք է սերտորեն համագործակցի գործընկեր կազմակերպությունների և ենթակապալառուների համապատասխան ստորաբաժանումների կամ ստորաբաժանումների հետ:
- 3.2 Վերստուգողի և գործընկեր կազմակերպությունների կամ ենթակապալառուների համապատասխան մարմինների միջև հարաբերությունները պետք է կարգավորվեն են համապատասխան համաձայնագրերով:

IV. Կառավարում և կառուցվածք

- 4.1 Վերստուգող պետք է նշանակվի հետաքննություններ իրականացնելու և (ցանկալի է) կառուցվածքային ստորաբաժանման կառավարման փորձ ունեցող անհատ: Վերստուգողը պետք է անբասիր համբավ ունենա և լայն մասնագիտական շրջանակներում վայելի համապատասխան հեղինակություն:
- 4.2 Հոգաբարձուների խորհուրդը պատասխանատու է հետևյալի համար՝
- Թափանցիկ եղանակով Վերստուգողի նշանակման;
 - Վերստուգողի բնականոն գործունեությունից բխող համապատասխան որոշումների կայացման մեխանիզմների ներդրման;
 - Վերստուգողի գործունեության վերաբերյալ հաշվետվությունների ընդունման;
 - Վերստուգողի տարեկան բյուջեի քննարկման ու հաստատման;
- 4.3 Վերստուգողը պաշտոնավարում է երեք տարի՝ մեկ անգամ վերանշանակվելու իրավունքով: Իր անկախությունն ապահովելու նպատակով գործող Վերստուգողը չի կարող պաշտոնանկ արվել իր պաշտոնավարման ընթացքում, բացառությամբ խախտումների կամ մտավոր անկարողության պատճառով: Նրա նշանակման ժամկետներն ու պայմանները սահմանվում են Խորհրդի կողմից: Վերստուգողն իրավասու չէ R2E2 հիմնադրամում որևէ տեսակի աշխատանքի անցնել իր պաշտոնավարման ավարտից հետո մեկ տարվա ընթացքում: